ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2003 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2004

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 Իրականացված քաղաքականության հիմնական ուղղությունները…… 3

1.1. Գործունեության հիմնական ամփոփ արդյունքները……. 5

2 2003թ. կատարված հիմնական աշխատանքները……. 6

2.1. Օրենսդրական ոլորտ և զարգացման ծրագրերի մշակում……..…… 6

2.2. Առևտրի ոլորտ…… 9

2.3. Ներդրումային ոլորտ……. 11

2.4. Գիտական և տեխնոլոգիական զարգացման ոլորտ…….. 12

2.5. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ……. 14

2.6. Արդյունաբերական ոլորտ……. 15

2.7. Ռազմաարդյունաբերական և տնտեսության զորահավաքային նախապատրաստության ոլորտ……... 20

2.8. Մասնավորեցման ոլորտ…… 23

2.9. Արտաքին տնտեսական քաղաքականության և արտաքին տնտեսական համագործակցության ոլորտ……... 24

2.10. Արտաքին առևտուր……. 26

2.11. ԱՀԿ և ԵՄ հետ համագործակցություն…….. 27

2.12. Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտ…….. 30

2.13. Զբոսաշրջության ոլորտ……... 33

2.14. Մտավոր սեփականության պահպանության ոլորտ……. 35

2.15. Ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստամաև ոլորտ……..……... 37

2.16. Որակի վերահսկողություն…….. 39

2.17. Տնտեսության մեջ աշխատանքների անվտանգ կազմակերպման հսկողություն……. 40

Հավելված 1. Համառոտ տվյալներ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության համակարգի 2003թ. ֆինանսատնտեսական գործունեության մասին…… 43

Հավելված 2. Նախարարության փաստաթղթաշրջանառությունը……..…… 45

Հավելված 3. Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության 2004 թվականի միջոցառումների ցանկ……..……. 46

1. Իրականացված քաղաքականության հիմնական ուղղությունները

2003 թվականին ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) գործունեության համար հիմք են հանդիսացել ՀՀ նախագահի հրամանագրերը, ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումները, ՀՀ կառավարության գործունեության ծրագիրը և դրա իրագործումն ապահովող միջոցառումները, ՀՀ 2003 թվականի պետական բյուջեի՝ ՀՀ կառավարության ուղերձի հիմնադրույթները և ՀՀ կառավարությունում Նախարարության 2002 թվականի հաշվետվության քննարկման արդյունքում տրված հանձնարարականները:

ՀՀ կառավարության 2003 թվականի աշխատանքային ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկով Նախարարությանը վերապահված 41 միջոցառումներն իրականացվել են սահմանված ժամկետներում և ամբողջությամբ:

2003 թվականին իրականացված քաղաքականությունը հիմնականում նպատակաուղղված է եղել՝

- հանրապետության տնտեսության կայուն զարգացմանը նպաստող միջավայրի հետագա բարելավմանը, մասնավորապես ազատական տնտեսության հիմնարար սկզբունքների պահպանմանն ու խորացմանը,
- տնտեսության մասնավոր հատվածի հետագա զարգացմանը և ՀՆԱ-ում նրա տեսակարար կշռի բարձրացմանը, վարչարարական խոչընդոտների վերացմանը,
- գիտական և տեխնոլոգիական ներուժի մեծացմանը,
- ՓՄՁ պետական աջակցության ծավալների և ձևերի ընդլայնման ճանապարհով տնտեսական շրջանառության մեջ ավելի մեծաթիվ սուբյեկտների ներգրավման արագացմանը, ՀՆԱ-ում ՓՄՁ տեսակարար կշռի մեծացմանը,
- արտաքին առևտրաշրջանառության ծավալների մեծացմանը, արտահանման ծավալների առաջանցիկ տեմպերի ապահովմանը,
- իրական ներդրումների ծավալների մեծացմամբ երկրի տնտեսական ներուժի մեծացմանը,
- առևտրի և ծառայությունների ոլորտի զարգացմանը,
- շուկայական ենթակառուցվածքի զարգացմանը,
- տնտեսության իրական հատվածի զարգացմանը և նրա մրցունակության բարձրացմանը, հայրենական ապրանքների/ծառայությունների և ընկերությունների արտաքին շուկաներում առաջանցման աջակցությանը,

- հայրենական ապրանքների և ծառայությունների արտաքին շուկա մուտք գործելու, հայրենական ապրանքների արտահանման ծավալները մեծացնելու համար բարենպաստ պայմանների ապահովմանը,
- Հայաստանի Հանրապետության տնտեսությունը համաշխարհային տնտեսությանն արդյունավետ ինտեգրման ապահովմանը,
- բնակչության զբաղվածության մակարդակի և կենսամակարդակի բարձրացմանը նպաստելուն,
- սպառողական շուկայում սպառողների շահերի պաշտպանությանը,
- տնտեսության զորահավաքային նախապատրաստության ապահովմանը:

Ելնելով վերոնշյալից՝ Նախարարության գործունեությունն իրականացվել է հետևյալ ոլորտներում՝

ա) տնտեսական քաղաքականության,

բ) գիտության և տեխնոլոգիական զարգացման քաղաքականության,

գ) արտաքին տնտեսական քաղաքականության և տնտեսական համագործակցության,

դ) ԱՀԿ և ԵՄ հետ համագործակցության,

ե) գործարարության աջակցության,

զ) ՓՄՁ,

է) ներդրումային,

ը) տնտեսության իրական հատվածի, մասնավորապես՝ արդյունաբերության,

թ) առևտրի և ծառայությունների,

ժ) զբոսաշրջության,

ժա) ռազմաարդյունաբերական և տնտեսության զորահավաքային նախապատրաստության,

ժբ) մտավոր սեփականության պահպանության,

ժգ) ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման,

ժդ) որակի հսկողության,

ժե) տնտեսության մեջ աշխատանքների անվտանգ կազմակերպման հսկողության:

1.1. Գործունեության հիմնական ամփոփ արդյունքները

2003թ. գործունեության հիմնական ամփոփ արդյունքները եղել են.

1. ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցությունը,
2. Ստանդարտացման, չափագիտության և հավաստագրման համակարգի բարեփոխումների մեկնարկը,
3. Որպես գործարար միջավայրի բարելավումը, օրենսդրության հետագա կատարելագործումը, վարչարարական խոչընդոտների վերացումը,
4. Հայաստանի, որպես ազատական տնտեսությամբ երկրի, վարկանիշի ամրապնդումը 44-րդ տեղում,
5. Լոնդոնում կայացած հանքարդյունաբերության ոլորտը լուսաբանող աշխարհի հեղինակավոր «Mining Journal» ամսագրի կազմակերպած ամենամյա մրցանակաբաշխության «Մրցանակ երկրին» անվանակարգի մրցանակի շնորհումը Հայաստանի Հանրապետությանը,
6. Համակարգիչների արտադրության արհեստանոցային հավաքումից անցումը հարահոսային արտադրության,
7. ՀՆԱ-ի կառուցվածքում արդյունաբերության տեսակարար կշռի ավելացումը 1.1 %-ով և արդյունաբերության հաշվին ՀՆԱ-ի հավելաճի ավելացումը 0.2 %-ով,
8. ՀՆԱ-ի ծավալում ՓՄՁ տեսակարար կշռի 3 տոկոսային կետով ավելացումը,
9. Արտաքին առևտրաշրջանառության աճի տեմպը 130.5 %,
10. Հայաստան այցելած զբոսաշրջիկների թվաքանակի հատումը 200 հազարի սահմանագիծը՝ նախորդ տարվա համեմատ ավելի քան 27.1 % հավելաճի ապահովումը:

2. 2003թ. կատարված հիմնական աշխատանքները

2.1. Օրենսդրական ոլորտ և զարգացման ծրագրերի մշակում

Օրենսդրական ոլորտ

ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել են Նախարարության կողմից մշակված հետևյալ օրենքները՝

- «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին»,
- ««Արտոնագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին»,
- ««Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին»
- «Ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին »,
- ««Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին»:

Մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն են ներկայացվել ՀՀ օրենքների հետևյալ նախագծերը՝

- «Առևտրի և ծառայությունների մասին»,
- «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին»,
- «Չափումների միասնականության ապահովման մասին»,
- «Համապատասխանության գնահատման մասին»,
- ««Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին»,
- ««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին»,
- ««Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին»,
- ««Ֆիրմային անվանումների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»,
- «Արտադրական վտանգավոր օբյեկտների արդյունաբերական անվտանգության մասին»:

ՀՀ կառավարություն է ներկայացվել՝

- ՀՀ կառավարության որոշման 77 նախագիծ, ընդունվել է 63-ը,
- ՀՀ վարչապետի որոշման 22 նախագիծ, ընդունվել է 21-ը:

Մասնավորապես ընդունվել են ՀՀ կառավարության հետևյալ որոշումները՝

- «Ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում լիազորված պետական մարմիններ սահմանելու, դրանց իրավասությունները սահմանազատելու և ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի ու ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 10.04.2003թ. N 385-Ն որոշումը, որով ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման ու ՀՀ բնապահպանության նախարարությունները սահմանվել են որպես «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության եւ արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքով և ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով նախատեսված լիազորված մարմիններ, ինչպես նաև սահմանազատվել են իրավասությունները նշված մարմինների միջև: Նույն որոշմամբ ստեղծվել և սկսել է գործել ՀՀ կոնցեսիոն գործակալությունը՝ «ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով:
- «Բոնուսի մեծության հաշվարկման մեխանիզմը և կարգը հաստատելու մասին» 20.05.2003թ. N 550-Ն որոշումը և «Կոնցեսիոն վճարի չափը և վճարման կարգը սահմանելու մասին» 20.05.2003թ. N 562-Ն որոշումները՝ սահմանելով հանքարդյունահանման հատուկ լիցենզիայի տրամադրման համար հատուկ վճարի՝ բոնուսի հաշվարկման մեխանիզմն ու կարգը, լիցենզառուների կողմից ՀՀ պետական բյուջե տարեկան վճարվող կոնցեսիոն վճարի չափն ու վճարման կարգը:
- ՀՀ կառավարության «Կոնցեսիոն պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» 31.06.2003թ. N 989-Ն և «Կայունացման պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» 31.06.2003թ. N 988-Ն որոշումներով հաստատվել են ուսումնասիրության հատուկ լիցենզառուների և հանքարդյունահանման հատուկ լիցենզառուների հետ կնքվող կայունացման և կոնցեսիոն պայմանագրերի օրինակելի ձևերը:

ՀՀ նախագահի 14.10.2003թ. «Ընդերքօգտագործման խորհրդատվական հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին» N 162-Ա հրամանագրով հատատվել է հանքային իրավունքների տրամադրման վերաբերյալ անկախ փորձագիտական եզրակացության ապահովման նպատակով ստեղծվող ընդերքօգտագործման խորհրդատվական հանձնաժողովի անհատական կազմը:

Նախարարությունը մշակել և կառավարություն է ներկայացրել տնտեսության ոլորտները կարգավորող նաև բազմաթիվ այլ որոշումների նախագծեր:

Նախարարությունը առաջարկություններ է ներկայացրել նաև շրջանառության մեջ դրված մոտ չորս տասնյակ օրենքների նախագծերի վերաբերյալ:

Ծրագրերի մշակում

Նախարարությունը մշակել է ՀՀ կառավարության գործունեության 2003-2007թթ. ծրագրի տնտեսական զարգացման ռազմավարությանը վերաբերող մասը:

Երկրի երկարաժամկետ զարգացման ռազմավարությունն ամրագրելու նպատակով 2003 թվականին Նախարարությունը ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի Հայաստանյան գրասենյակի հետ համատեղ նախաձեռնել է «Հայաստանի կայուն տնտեսական զարգացման քաղաքականություն» ծրագրի մշակման աշխատանքները, որոնք կավարտվեն 2004 թվականին:

Մշակման ընթացքում է գտնվում ՀՀ տարածքային տնտեսական զարգացման ռազմավարությունը, որը համաձայն ՀՀ կառավարության 2004թ. գործունեության ծրագրի՝ 2004թ. հունիսին կներկայացվի ՀՀ կառավարություն:

Մշակվել և շահագրգիռ նախարարությունների ու ՀՀ ԳԱԱ-ի քննարկմանն է ներկայացվել «ՀՀ-ում գիտության և տեխնոլոգիաների զարգացման Հայեցակարգի» նախագիծը:

Մշակվել է ՀՀ ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման բնագավառներում օրենսդրական դաշտի կատարելագործման հայեցակարգը:

Տնտեսական զարգացման ծրագրերի և տնտեսական քաղաքականության մշակման ու ճշգրտման տեղեկատվական ապահովման նպատակով կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- իրականացվել է ոլորտներում գործող մոտ 240 ընկերությունների գործունեության հիմնական արտադրական ցուցանիշների ամսական վարչական մոնիտորինգ,
- կատարվել են տնտեսության առանձին ոլորտների զարգացման միտումների ուսումնասիրություններ, առաջարկություններ են ներկայացվել ՀՀ գյուղատնտեսության և էներգետիկայի նախարարություններ, ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն և ՀՀ մաքսային պետական կոմիտե,
- գնահատվել է 2003թ. ընթացքում ստեղծված աշխատատեղերի քանակը:

Իր իրավասության սահմաններում Հայաստանի Հանրապետության տարեկան բյուջեի կազմման և բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործման ապահովման նպատակով Նախարարությունը նախապատրաստել է 2004 թ. ՀՀ պետական բյուջեի ուղերձի նախագծում ընդգրկված «ՀՀ տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները» հատվածը և 2004 – 2006թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի փաստաթղթի վերաբերյալ առաջարկությունները:

Տարածքային զարգացման քաղաքականության մշակման և իրականացման շրջանակներում նախարարությունը մասնակցել է Տավուշի, Սյունիքի մարզերի, Վարդենիսի տարածաշրջանի զարգացման հիմնախնդիրների լուծման միջոցառումների ծրագրերի մշակմանը և նշված միջոցառումների իրականացման ուղղությամբ տարվող աշխատանքներին, ինչպես նաև Լոռու մարզի հիդրոէներգետիկայի զարգացման ծրագրի մշակմանը և բյուջետային հայտերի քննարկումներին:

2003թ. մայիսի 13-ին նախարարության ներկայացուցիչները ՀՀ ԱԳՆ-ի, ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի, ՀՀ Սյունիքի մարզպետարանի ներկայացուցիչների հետ ԻԻՀ-ի և ՀՀ տնտեսական համագործակցության համատեղ հանձնաժողովի 4-րդ նիստի Արձանագրության (Հուշագրի) 4-2 կետի շրջանակներում բանակցություններ են վարել Նորդուզ-Մեղրի սահմանամերձ առևտրի շուկայի գործունեության խոչընդոտների և խնդիրների լուծման ուղղությամբ:

2.2. Առևտրի ոլորտ

2003թ. առևտրի և ծառայությունների ոլորտին առնչվող աշխատանքներն ուղղված են եղել օրենսդրական, իրավապայմանագրային և նորմատիվային դաշտի կանոնակարգմանը, գործարարների համար հավասար մրցակցային դաշտի ապահովմանը, միջազգային շուկաներում հայրենական ապրանքարտադրողների շահերի պաշտպանությանը:

Նշված խնդիրների լուծման նպատակով իրականացվել է հետևյալը.

- Առևտրի և ծառայությունների ոլորտի գործունեության կանոնակարգման և տնտեսավարող սուբյեկտների աշխատանքների բարելավման նպատակով, ինչպես նաև հաշվի առնելով առևտրի և ծառայությունների ոլորտի կարգավորման միջազգային փորձը, մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը:
- Լրամշակվել է ծառայությունների ոլորտում պարտադիր սերտիֆիկացման ծառայությունների ցանկը:
- Մասնակցություն է ցուցաբերվել սպառողական շուկայի, ծառայությունների ոլորտի, ինչպես նաև սակագնային և ոչ սակագնային կարգավորմանն ուղղված այլ նախարարությունների և գերատեսչությունների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերի մշակմանը:

- Իրականացվել են առևտրական ներկայացուցչությունների ինստիտուտի և նրա օրենսդրական դաշտի ձևավորմանն ուղղված գործառույթներ, մասնավորապես՝ առաջարկություններ են ներկայացվել «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ:
- Հայկական ապրանքների ներմուծման ժամանակ սակագնային և ոչ սակագնային արգելքների նվազեցման նպատակով միջոցառումներ են իրականացվել որոշ գործընկեր-պետությունների հետ: Այդ ուղղությամբ շարունակվել են բանակցությունները հայրենական արտադրության որոշ ապրանքներ Իրան ներմուծման ժամանակ սահմանափակումների նվազեցման ուղղությամբ:
- Մոսկվայում Համառուսաստանյան Ցուցահանդեսային Կենտրոնում ավարտվել են «Հայաստան» տաղավարի գործարկման աշխատանքները, և 2003 թ. հունվարի 16-ին տեղի է ունեցել նրա պաշտոնական բացումը:
- Իրականացվել են ՌԴ-ի և ՀՀ-ի միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հինգերորդ նիստի Արձանագրությունից բխող խնդիրների կատարմանն ուղղված աշխատանքները, ինչի վերաբերյալ պարբերաբար զեկուցվել է ՀՀ կառավարությանը և ՌԴ-ի և ՀՀ-ի միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հայկական մասի նախագահին:
- Շարունակվել են ԱՊՀ պետությունների միջև Ազատ առևտրի գոտու լիակատար գործունեությունն ապահովող իրավապայմանագրային դաշտի ձևավորման աշխատանքները, ինչպես նաև ԱՊՀ պետությունների տնտեսական համագործակցության ընդլայնմանն ուղղված այլ միջոցառումների իրականացումը:
- ԱՊՀ տնտեսական խորհրդին ներկայացվել է Հայաստանի Հանրապետության առևտրային քաղաքականության ակնարկի ազգային զեկույցը և հայկական արտադրության մրցունակ ապրանքների ցանկը:
- Մասնակցություն է ցուցաբերվել «ՀՀ արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միություն», «Հայաստանի վաճառականներ» և «Սպառողների ազգային ասոցիացիա» հասարակական կազմակերպությունների հետ գործարար միջավայրի բարելավմանը և սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված բազմաթիվ հարցերի քննարկումներին:

2.3. Ներդրումային ոլորտ

2003թ. Նախարարության կողմից իրականացվող ներդրումային քաղաքականությունը նպատակաուղղված է եղել ներդրումային միջավայրի հետագա բարելավմանը:

Գործարար և ներդրումային միջավայրը բարելավելու նպատակով նախարարության կողմից պատրաստվել և ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում գործարար միջավայրի և ներդրումային դաշտի բարելավմանն ուղղված ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշումը:

ՀՀ կառավարության վարած ներդրումային քաղաքականության արդյունքում օտարերկրյա ներդրողների կողմից 2003թ.-ի ինն ամիսների ընթացքում Հայաստանում իրականացված օտարերկրյա ներդրումների ծավալը կազմել է 167,3 մլն. ԱՄՆ դոլար (աճը՝ 37%), որից ուղղակի ներդրումները՝ 117,4 մլն. ԱՄՆ դոլար (աճը՝44,2%):

Շարունակվել են ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության երկկողմ բանակցությունները: 2003թ. մայիսի 23-ին Հնդկաստանի կառավարության հետ ստորագրվեց «Ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» Համաձայնագիրը: Բանակցային գործընթացի մեջ են գտնվում դեռևս 21 Համաձայնագրեր: Ստորագրման են նախապատրաստվել 2 Համաձայնագիր (Չեխիայի և Մոլդովայի հետ):

2003թ. իրականացվել է համագործակցություն ներդրողներին և ներդրումներին օժանդակող և խթանող, ինչպես նաև ներդրումների և ներդրողների պաշտպանության հարցերով զբաղվող մասնագիտացված միջազգային և հայաստանյան կառույցների հետ, մասնավորապես ակտիվ համագործակցություն է ծավալվել ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի և Հայաստանի գործարարների և արդյունաբերողների միության հետ, ինչպես նաև հետևողական աշխատանքներ են տարվել Գործարարության աջակցման խորհրդում բարձրացված խնդիրների լուծման ուղղությամբ:

2003թ. ընթացքում սերտ համագործակցություն է իրականացվել միջազգային կազմակերպությունների Հայաստանյան գրասենյակների հետ, մասնավորապես՝ Համաշխարհային բանկի, Միջազգային արժութային հիմնադրամի, ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի, ՄԱԿ-ի Արդյունաբերական Զարգացման Կազմակերպության, ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի հետ և այլն: ՀԲ-ի հետ համագործակցությունը կենտրոնացած է եղել հիմնականում գործարար և ներդրումային միջավայրի բարելավման խնդիրների ուղղությամբ, հատկապես SAC-5-ի շրջանակում:

2003թ.-ի սեպտեմբերի 22-24-ին Երևանում անցկացվեց Հայաստան-Սփյուռք առաջին տնտեսական համաժողովը, որին մասնակցեցին Հայաստանից և ավելի քան 20 երկրներից

ժամանած սփյուռքահայ գործարարներ: Համաժողովին զուգահեռ կազմակերպվեց Pan-Armenian Expo-2003 առևտրային ցուցահանդեսը, որտեղ 160 ընկերություններ՝ Հայաստանից և արտասահմանից, ներկայացրել էին իրենց ապրանքներն ու ծառայությունները:

Իրականացվել է 2003թ. մայիսի 19-21-ը Երևանում կայացած Հայ-ռուսական ներդրումային համաժողովի նախապատրաստական աշխատանքների համակարգումը՝ Զարգացման հայկական գործակալության, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ու ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի ներգրավմամբ:

Հայաստանի եւ Ռուսաստանի կառավարության ներկայացուցիչները, համաժողովին մասնակցող գործարարների հավանությամբ ստորագրեցին կոմյունիկե:

2004 թ. նախատեսվող միջոցառումները հիմնականում հանգելու են հետևյալին.

1. *2003թ. սկսված Զարգացման հայկական գործակալության կարողությունների հետագա մեծացման շարունակական ընդլայնում:*
2. *ՀՀ ներդրումային քաղաքականության Հայեցակարգի մշակում:*

2.4. Գիտական և տեխնոլոգիական զարգացման ոլորտ

Նախարարության համակարգի, գիտության ոլորտը ներկայացնող կազմակերպությունների ապրանքային արտադրանքի միջին հավելաճը կազմել է 31.0%: Հատկապես բարձր աճ է գրանցվել «Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոն», «Երևանի ֆիզիկայի ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություններում (համապատասխանաբար՝ 219,4 և 139,4 %), «Անդրոն ԿԷ ԳՀԻ»-ում (111,2%), «Էլեկտրամաշ ԳՀԻ» ՓԲԸ-ում (95,7%), «Էլաս» ՓԲԸ-ում (78,6%) :

2003թ. արտադրության մեջ գիտատեխնիկական արդյունքի ներդրման հաջող օրինակներից է «Գրանդ Տոբակո» ընկերության պատվերով «Պլաստպոլիմեր ԳՀԻ» ՓԲԸ-ի կողմից մշակված հատուկ մակնիշի սոսնձի, տարեկան 18-20 տոննա ծավալի, արտադրության կազմակերպումը:

«Պլաստպոլիմեր ԳՀԻ» ՓԲԸ-ն բանակցություններ է վարում «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ընկերության հետ՝ սոսնձի մատակարարման, ինչպես նաև հանրապետության առողջապահական, հյուրանոցային և առողջարանային կազմակերպությունների հետ՝ լվացող նյութերի բաղադրիչների մշակման և առաքման վերաբերյալ:

«Արիակ կիրառական քիմիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն (զբաղված է օրգանական նյութերի սինթեզով և առաքումով) 2003թ. հաջողությամբ շարունակել է աշխատել ներքին և արտաքին (Կանադա, ԱՄՆ, Հարավ-Աֆրիկյան Հանրապետություն, Արևմտյան Եվրոպա, Ռուսաստան, Սինգապուր, Ճապոնիա և այլն) շուկաներում: 2003թ. դրությամբ ինստիտուտի կողմից արտադրվող, գիտական և կիրառական նպատակներով օգտագործվող, միջազգային դասակարգման նյութերի քարտադարանն ընդգրկել է շուրջ 2500 անուն:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից առաջին դրական արձագանքներն են ստացվել տեղական ցեոլիտների, տորֆի և հանքային պարարտանյութերի հիմքի վրա եզակի տեխնոլոգիայով «Երևանի «Քիմտեխ» ԳՀԻ» ՓԲԸ-ում ստեղծված և հաջող փորձարկում անցած պարարտանյութի վերաբերյալ:

«Անդրոն ԳՀԻ» ՓԲԸ հենքի վրա ձևավորվում է Հայաստանում առաջին տեխնոպարկերից մեկը, որտեղ միավորվել են կենսատեխնոլոգիական, միկրոկենսաբանական և կենցաղային քիմիայի, ինչպես նաև փայտամշակման բնագավառի մի քանի ընկերություններ՝ VITAMAX-E, BioCHEM և այլն:

«Արև» ՓԲԸ-ի մասնագետների կողմից մշակվել և ներդրման փուլում է գտնվում գերմաքուր մետաղների (պղինձ, ոսկի, մոլիբդեն) ստացման եզակի արդյունավետություն ապահովող տեխնոլոգիա:

«Հաշվողական տեխնիկայի և ինֆորմատիկայի ԳՀԻ» ՓԲԸ-ում մոնտաժվել է մեկ հերթափոխում 64 համակարգիչ արտադրական հզորություն ունեցող հավաքման հոսքագիծ, որով ստեղծվել է բարձր վարձատրվող (100 հազ. դրամ) 80 աշխատատեղ:

2003թ. աշխարհի երկու խոշորագույն գիտական կենտրոններում (Ջեֆերսոնի լաբորատորիա, ԱՄՆ և DEZY, Գերմանիա) համարյա միաժամանակ հայտնագործվել է պենտա-կվարկ, ինչը նոր խոսք է տարրական մասնիկների ֆիզիկայի բնագավառում, որում վճռական դերակատարում են ունեցել Երևանի ֆիզիկայի ինստիտուտի ֆիզիկոսները:

«Կենսատեխնոլոգիայի ԳՀԻ» ՓԲԸ-ն կենսատեխնոլոգիայի բնագավառում ձեռք բերած նվաճումների համար արժանացել է միջազգային Business Initiative Directions կազմակերպության «Gold» կատեգորիայի «International Star Award» մրցանակին:

Նախարարության համակարգի գիտական կազմակերպություններում պաշտպանվել են 2 դոկտորական և 6 թեկնածուական թեզեր: Հրապարակվել են 50-ից ավելի գիտական հոդվածներ, կազմակերպվել են երեք միջազգային գիտաժողովներ:

Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոնում բացվել է ամերիկյան գիտատեխնիկական գրականության ընթերցասրահ, որտեղ ներկայացված է ԱՄՆ դեսպանատան հովանավորությամբ ստացված 5000-ից ավելի անուն ընդգրկող գրականություն:

Չի հաջողվել 2005թ. ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական ծրագրերում ընդգրկել Երևանի ֆիզիկայի ինստիտուտի և մի շարք այլ կազմակերպությունների կողմից ներկայացված գիտական և կիրառական մեծ արժեք ներկայացնող ծրագրերը:

2.5. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ

2003թ. ընթացքում Նախարարության գործունեությունը ՏՏ ոլորտում ուղղված է եղել 2001թ. մայիսի 3-ին ՀՀ կառավարության կողմից հաստատված «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների արդյունաբերության զարգացման հայեցակարգի» դրույթների իրականացմանը:

Իրականացվել են մի շարք ծրագրեր՝ ուղղված արտահանման խթանմանը: Մասնավորապես՝ ապահովվել է Հայաստանյան ՏՏ մասնակցությունը CeBIT, Comdex Systems 2003 միջազգային ցուցահանդեսներին: Ինկուբատորի աջակցությամբ նախապատրաստվել են հայկական մի շարք ՏՏ առաջատար ընկերությունների ղեկավարների գործարար այցերը եվրոպական երկրներ և Ճապոնիա:

Հայաստան-Սփյուռք համաժողովի շրջանակներում քննարկվել են ՏՏ ոլորտի սփյուռքահայ գործարարների հետ համագործակցության հարցերը:

«Ձեռնարկությունների ինկուբատոր» Հիմնադրամի գործունեության շրջանակներում իրականացվել են օտարերկրյա ներդրումների և արտահանման խթանման, ծրագրային համակարգման սերտիֆիկացման, նյութի մատուցման հմտությունների զարգացման, ցանցային անվտանգության և այլ բնագավառներին վերաբերող կրթական և վերապատրաստման մի շարք ծրագրեր:

ՏՏ ոլորտում նկատվել են ծրագրային արտադրանքից (Software) դեպի մեքենայական մասի (Hardware) արտադրությանն անցման միտումներ: «ՏՏ կենտրոն» (CIT) ընկերությունը մոնտաժել է օրական 60 համակարգիչ արտադրողականությամբ հոսքագիծ: Առաջին անգամ Հայաստանում համակարգիչների արտադրությունն արհեստանոցային հավաքումից անցնում է հարահոսային արտադրության:

Համաձայն ՀՀ կառավարության հանձնարարականի՝ մշակվել է Հայաստանում էլեկտրոնային առևտրի զարգացմանն ուղղված միջոցառումների ծրագրի նախագիծ, որն ըստ սահմանված կարգի ներկայացվել է շահագրգիռ գերատեսչությունների և կազմակերպությունների քննարկմանը:

2003թ. ՏՏ ոլորտում աշխատատեղերի քանակն աճել է շուրջ 200-ով, արտահանման ծավալը, ըստ գնահատման, կազմել է շուրջ 50 մլն. ԱՄՆ դոլար, ՀՆԱ-ի ծավալում ՏՏ ոլորտի տեսակարար կշիռը կազմել է 1,7 %, արտադրության ծավալի աճի տեմպն կազմել է շուրջ

115%: 2003թ. ոլորտի ակտիվ աշխատող ընկերությունների թիվը կազմել է շուրջ 120, որոնցից մի քանիսում դրվել են SS մեքենայական մասի արտադրության հիմքերը:

SS ոլորտի զարգացմանը խոչընդոտում են հետևյալ գործոնները.

- դանդաղ են ընթանում էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման գործընթացները տնտեսության բոլոր մակարդակներում,
- էական տեղաշարժեր տեղի չեն ունենում հեռահաղորդակցության որակի բարձրացման և այդ ոլորտի կողմից մատուցվող ծառայությունների արժեքի իջեցման ուղղությամբ,
- դանդաղ է ընթանում SS ներթափանցումը/տարածումը գործունեության մյուս ոլորտներ,
- դեռևս չի ավարտվել ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի ձևավորումը, մասնավորապես հիմնարար «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման գործընթացը, լուծված չէ «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի» տեղակայման հարցը:

2004 թվականի ընթացքում ոլորտի զարգացման նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- *Մինչև 2004թ. հուլիսը լրամշակել և ՀՀ կառավարություն ներկայացնել «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի նախագիծը,*
- *մշակել և ՀՀ կառավարություն ներկայացնել էլեկտրոնային առևտուրը կարգավորող կանոնակարգի նախագիծը,*
- *կազմակերպել էլեկտրոնային առևտրի գծով մասնագետների վերապատրաստման դասընթացներ,*
- *«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի աշխատանքների շրջանակներում, բոլոր կարիք ունեցող SS ընկերություններին ապահովել հեռահաղորդակցության ենթակառուցվածքով և գրասենյակային տարածքով,*
- *աջակցել հայկական ընկերություններին՝ պոտենցիալ ներդրողներին և գործընկերներին ներկայացման գործում,*
- *գործարար կապեր հաստատել եվրոպական և ճապոնական SS ոլորտի ընկերությունների հետ,*
- *ապահովել հայկական SS ընկերությունների մասնակցությունը միջազգային ցուցահանդեսներին (CeBIT, Comdex),*
- *կազմակերպել SS գծով Հայաստան-Սիլիկոն 1-ին համաժողովը:*

2.6. Արդյունաբերական ոլորտ

Ըստ պաշտոնական վիճակագրության, 2003թ. ընթացիկ գներով թողարկվել է 423717.4 մլն դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 418417.6 մլն դրամի արտադրանք,

այդ թվում՝ ԱՊՀ երկրներում՝ 51513.2 մլն դրամի, այլ երկրներում՝ 97863.9 մլն դրամի արտադրանք: 2002թ. նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 114.9%, իսկ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսն առանց էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման՝ 118.2%:

Ըստ մարզերի արդյունաբերական արտադրության աճի տեմպը կազմել է՝ Երևան քաղաքում՝ 119.7%, Արագածոտնի մարզում՝ 155.2%, Գեղարքունիքի մարզում՝ 122.3%, Կոտայքի մարզում՝120.3%, Տավուշի մարզում՝111.7%, Վայոց Ձորի մարզում՝ 108.1%, Լոռու մարզում՝ 104.6%, Սյունիքի մարզում՝ 104.2%, Շիրակի մարզում՝104.0%: Արդյունաբերական արտադրանքի 50%-ը թողարկվել է Երևանի արդյունաբերական ընկերություններում:

Թեթև արդյունաբերություն

Արտադրության ծավալը կազմել է 12157.3 մլն դրամ, 2002թ. նկատմամբ աճը կազմել է 31.3 %:

2003թ. վերագործարկվել են Երևանի տրիկոտաժի «Անուշ» ՍՊԸ-ն, «Մահուդ» ԲԲԸ-ն: Արտադրության ծավալները զգալիորեն մեծացրել են ոլորտի հետևյալ ընկերությունները.

Երևանի «Արմեն-Կարպետ» ԲԲԸ-ն, Երևանի տրիկոտաժի «Տոսպ» ԲԲԸ-ն, Երևանի «Հայաս» ԲԲԸ-ն, Չարենցավանի «Հոլանի» ԲԲԸ-ն և այլն: Մասնավորապես, բրդյա գործվածքների արտադրության աճի տեմպը կազմել է 132.8%-ով, գորգերինը և գորգեղենինը՝ 180.5 %-ով, տրիկոտաժեղենինը՝ 157.3%-ով, կարի արտադրանքինը՝ 119.0%-ով: Սակայն մի շարք ընկերություններում նկատվում է ծավալների անկում. Նուբարաշենի տրիկոտաժի ԲԲԸ (48%), «Հայք» ԲԲԸ (18.5%), Վանաձորի «Բազում-Ֆիրմա» ԱԿ (17.2%), «Գյումրու մանվածքային ֆաբրիկա» ԲԲԸ (48.5%): Անկման հիմնական պատճառներն են՝ թողարկված արտադրանքի տեսականու փոփոխությունը, պատվերների ծավալների կրճատումը, շրջանառու միջոցների սղությունը:

2004-2005թթ. ընթացքում ոլորտում իրականացվող քաղաքականության հիմնական նպատակն է հանդիսանալու շուկայական տնտեսության պայմաններում կայուն և արդյունավետ գործող, ներքին և արտաքին շուկային նպատակաուղղված, հիմնականում մասնավոր սեփականության վրա հիմնված հզոր համալիրի ստեղծումը, որն առաջիկա 3-4 տարիների ընթացքում հնարավորություն կտա վերագործարկել 15-20 ձեռնարկություններ, ստեղծել լրացուցիչ 6-8 հազ. աշխատատեղ, 70-80%-ով ավելացնելով արտադրանքի կարևորագույն տեսակների ծավալները:

Քիմիական արդյունաբերություն

Շարունակվել է «մեծ քիմիայի» համար խոշոր ներդրողների ներգրավման և նրանց կայուն գործունեության ապահովման գործընթացը:

2003թ. քիմիական արդյունաբերության զարգացումն ընթացել է «մեծ քիմիայից» դեպի «փոքր քիմիա» քաղաքականության շրջանակներում:

Մասնավորապես, «փոքր քիմիայի» «Բուլվինոս-Քեմիքլզ», «Լիկվոր», «Քրաուն Քեմիքալ», «Ֆարմատեք» ՍՊ և «Շեն-Կոնցեռն» ՍՊ և այլ ընկերությունների հիմնական արտադրատեսակներից լաքաներկանյութերի արտադրությունը 2002թ. համեմատ ավելացել է 25.1%-ով, քիմիկադեղագործական արտադրանքինը՝ 8.9%-ով, պլաստմասսայից իրերինը՝ 6.7%-ով, իսկ սինթետիկ կաուչուկի և լվացող և մաքրող միջոցների արտադրությունները նվազել են, համապատասխանաբար 50.0 և 28.1%-ով: Վերջինս էլ, հիմնականում, պայմանավորել է քիմիական արդյունաբերության արտադրանքի 82.5% մակարդակը:

Քիմիական արդյունաբերության արտադրանքի ծավալը կազմել է 7345.4 մլն.դրամ, իրացմանը ծավալը՝ 6606.3 մլն.դրամ:

Վերը նշված ընկերությունների կողմից թողարկվող դեղագործական, ներկերի, կենցաղային քիմիայի և այլ արտադրանքը հաջողությամբ է իրացվում ոչ միայն ներքին, այլ նաև արտաքին շուկայում:

Մեքենաշինական և էլեկտրատեխնիկական արդյունաբերություն

2003թ. արտադրատնտեսական ցուցանիշների աճ է նկատվել համակարգի այնպիսի ընկերություններում, ինչպիսիք են Երևանի «Էլեկտրասարք» ԲԲԸ-ն (186%), «Արմենմոտոր» ՓԲԸ-ն (448%), «Սևանի կատարող սարքերի գործարան» ԲԲԸ-ն (199%), «Հայէլեկտրաապարատ» ԲԲԸ-ն (185%) և Վանաձորի «Ավտոմատիկա» ԲԲԸ-ն (8 անգամ) և այլն: Մասնավորապես, փոքր հզորության էլեկտրաշարժիչների արտադրությունն աճել է 129.1%-ով, ուժային ճկուն կաբելներինը՝ 102.3 %-ով, ջրային հաշվիչներինը՝ 9.3 անգամ, համակարգիչներինը՝ 154.9%-ով: Ընդհանուր առմամբ մեքենաների և սարքավորումների արտադրության աճը կազմել է 118.1%: Մեքենաշինական ոլորտի հետագա զարգացումն ապահովելու հարցում առկա են մի շարք դժվարություններ, որոնց լուծումը հնարավորություն կընձեռի ընկերություններին ընդլայնել արտադրությունը, աշխատել շահութաբեր և ստեղծել նոր աշխատատեղեր:

2004թ. ոլորտին առնչվող Նախարարության գործունեության հիմնական նպատակն է լինելու առավելագույն չափով նպաստել համակարգի ընկերությունների արտադրության արդյունավետության բարձրացմանը՝ հիմնված արտադրության նորացման գործընթացների արագացման և մրցունակ արտադրանքի թողարկման վրա:

Ռազմավարական խնդիրների լուծման նպատակով 2004թ. ընթացքում կիրականացվեն մի շարք միջոցառումներ՝ ուղղված արտահանման խթանմանը, ներդրումների ներգրավմանը, արտադրական կոոպերացիայի խորացմանը, ինչպես նաև իրացման և նոր տեխնոլոգիաների ներդրման հետ կապված խնդիրների լուծմանը:

Կշարունակվեն աշխատանքները ԱՊՀ երկրների հետ տնտեսական ինտեգրացման խորացման նպատակով՝ հասցնելով ավարտին «Գյումրու հղկող հաստոցների գործարան» ՓԲԸ-ի և ՌԴ Ակսայի հաստոցաշինական գործարանի հետ համատեղ ձեռնարկություն ստեղծելու աշխատանքները:

Ակնագործություն և ոսկերչություն

2003թ. ՀՀ կառավարությունն ընդունել է «Ակնագործության և ոսկեգործության 2004-2006թթ. զարգացման միջնաժամկետ ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» որոշումը:

Ոլորտի համար կարևորվեց նաև ՀՀ կառավարության 23.05.2003թ. N505-ն որոշման ընդունումը, որն անհրաժեշտ իրավական հիմք հանդիսացավ «Քիմբերլեյ Գործընթացի» հավաստագրման ծրագրի պահանջների իրականացման համար Հայաստանի Հանրապետության տարածքում: Ներկայումս աղամանդների միջազգային շուկայում խիստ կարևոր նշանակություն ունեցող կոնֆլիկտային աղամանդների շրջանառության դեմ ուղղված "Քիմբերլեյ Գործընթացի" հավաստագրման ծրագրի ներդրումը, որին 58 այլ մասնակիցների հետ միասին մասնակցում է նաև ՀՀ-ն, արտահայտվեց միջազգային ինտեգրացման գործընթացների հետագա խորացմամբ:

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև 2002-2006 թվականներին Հայաստանի Հանրապետություն չմշակված բնական ալմաստներ մատակարարելու մասին» միջկառավարական համաձայնագիրը 2003թ. գործեց անարդյունավետ: Նախատեսված 400.0 հազար կարատ ոսկերչական նշանակության ալմաստի հումքից հայկական կողմի ընկերություններին վաճառվել է ընդամենը 130.0 հազ կարատ, իսկ ոսկերչական նշանակության համար ոչ պիտանի (տեխնիկական նշանակության) ալմաստի հումք ընդհանրապես չի մատակարարվել: Ստեղծված իրավիճակը հիմնականում պայմանավորված է համաձայնագրով ռուսական կողմի մատակարար հանդիսացող «Ալռոսա» բաժնետիրական ընկերության գնային քաղաքականության փոփոխություններով: 2004թ. առաջնահերթ խնդիրներից է համարվում վերոհիշյալ Համաձայնագրի կատարման արդյունավետության բարձրացումը:

Աշխատանքներ են իրականացվել Շիրակի, Տավուշի, Արագածոտնի մարզերում, Մարտունիում, Վարդենիսում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում հիմնադրված ոսկերչական և աղամանդագործական արտադրամասերի լրիվ հզորությամբ գործարկման ուղղությամբ, որոնք կշարունակվեն 2004թ.:

Երևանում կազմակերպվեց "Ոսկեգործություն և ակնագործություն-2003" միջազգային ցուցահանդեսի կազմակերպումը, ինչպես նաև ապահովվեց արտերկրի մի շարք կարևոր միջազգային ցուցահանդեսներին ոլորտի ձեռնարկությունների մասնակցությունը:

2003թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ճյուղի բազային ընկերությունների արտադրանքի թողարկման, իրացման և արտահանման ցուցանիշները կազմել են՝

Արտադրանքի թողարկում 138,3 մլրդ. դրամ, աճը 2002թ. նկատմամբ կազմել է 31,3%,

Իրացում 133,2 մլրդ. դրամ,աճը 2002թ. նկատմամբ կազմել է 20.3%,

Արտահանում 131,8 մլրդ. դրամ,աճը 2002թ. նկատմամբ կազմել է 20.5%, Ճյուղում զբաղված են ավելի քան 5000 մարդ, որոնց միջին աշխատավարձը կազմել է 90 հազար դրամ:

Հանքարդյունաբերություն, մետաղագործություն և շինանյութերի արտադրություն

Հանքագործական արդյունաբերության արտադրանքի ծավալը կազմել է 46.6 մլրդ.դրամ, իրացման ծավալը՝ 36.3 մլրդ. դրամ, աճի տեմպը կազմել է 102.4%:

Մետաղագործական արդյունաբերության արտադրանքի ծավալը կազմել է 46.2 մլրդ.դրամ, իրացման ծավալը՝ 53.0 մլրդ.դրամ, աճի տեմպը կազմել է 118.3%: Մասնավորապես, մետաղագործական արդյունաբերության կազմակերպությունների կողմից հաշվետու ժամանակաշրջանում 2002թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ալյումինե գլանվածքի արտադրությունն ավելացել է 82.4 անգամ, ալյումինե փայլաթիթեղինը՝ 77.8%-ով, պղնձե խտանյութում պղնձինը՝ 8.6%-ով, իսկ կոնվերտորային (սև) պղնձի արտադրությունը նվազել է 3.7%-ով:

Ոչ հանքային շինանյութերի արտադրության ծավալի աճի տեմպը բնեղեն արտահայտությամբ կազմել է 120.7%-ով, ցեմենտինը՝ 108.4%, գաջինը՝ 128.7%, կանոնավոր կտրվածքի տուֆինը՝ 112.0%, ալյումինե և մետաղապլաստիկ իրերինը՝ 3.2 անգամ և այլն:

Ոլորտի ընկերություններում փաստացի աշխատողների թվաքանակը կազմել է 10881 մարդ՝ 72000 դրամ միջին աշխատավարձով:

2002թ. վերջում մասնավորեցնելուց հետո ձեռնարկված միջոցառումների շնորհիվ «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ-ն 2003թ. 2002թ. համեմատ թողարկել է 2.7 անգամ ավել արտադրանք:

«Արմենալ» ՓԲԸ-ն 2003թ. թողարկել է 3.16 անգամ ավել արտադրանք նախորդ տարվա համեմատ: 2004թ. այս ընկերությունում նախատեսվում է իրականացնել տեխնիկական վերազինում՝ միջազգային չափանիշներով նրբաթիթեղ արտադրելու նպատակով:

«Էյ-Սի-ՓԻ» ՓԲԸ-ն կառուցել և շահագործման է հանձնել ԼՂՀ-ում Դրմբոնի պղինձ-ոսկի լեռնահարստացման համալիրը, որի ոսկու բարձր պարունակությամբ պղնձի խտանյութը արդեն վերամշակվում է Ալավերդու պղնձաձուլական գործարանում:

Շինանյութերի արդյունաբերության երկու առաջատարների՝ «Արարատցեմենտ» ԲԲԸ և «Միկացեմենտ» ՍՊԸ կողմից թողարկվել է 6.5 մլրդ դրամի ապրանքային արտադրանք՝ նախորդ տարվա 5.9 մլրդ դրամի դիմաց(աճի տեմպը 110%), արտադրանքի իրացումը համապատասխանաբար կազմել է 6.5 մլրդ դրամ և 6.0 մլրդ դրամ (աճի տեմպը 108%):

Ավարտվել են Ճապոնիայի կառավարության ֆինանսական և տեխնիկական օժանդակությամբ Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի զարգացմանն ուղղված Հիմնարար Զեկույցի մշակման շրջանակներում իրականացված ոլորտի ուսումնասիրության աշխատանքները, որի արդյունքում մշակվել է ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի

զարգացման Հիմնարար Զեկույցը և Լոնդոնում կազմակերպվել է ոլորտում ներդրումների ներգրավմանն ուղղված սեմինար:

2003թ. դեկտեմբերի 2-4-ը Լոնդոնում կայացած հանքարդյունաբերության ոլորտը լուսաբանող աշխարհի ամենահեղինակավոր "Mining Journal" ամսագրի ամենամյա մրցանակաբաշխությանը «Մրցանակ երկրին» անվանակարգի մրցանակը շնորհվեց Հայաստանի Հանրապետությանը, որն աչքի է ընկել հանքարդյունաբերության ոլորտի զարգացմանն ուղղված անցած տարվա ընթացքում կատարված բարեփոխումներով: Նշված անվանակարգում Հայաստանի Հանրապետության մրցակիցներն էին հանքարդյունաբերության ոլորտում ճանաչված այնպիսի երկրներ, ինչպիսիք են՝ Չինաստանը, Պերուն, Կոնգոն, Ռուսաստանը և Տանզանիան:

Չնայած 2003 թվականի մի շարք առանցքային նվաճումների, այդուհանդերձ հաշվետու տարվա ընթացքում չհաջողվեց ավարտին հասցնել ոլորտը կարգավորող օրենքների և ենթաօրենսդրական ակտերի միջև առկա որոշ անհամապատասխանությունների վերացմանն ուղղված գործընթացը, որը և նախատեսվում է ավարտել 2004 թվականին:

2.7. Ռազմաարդյունաբերական և տնտեսության զորահավաքային նախապատրաստության ոլորտ

2003թվականին ոլորտում իրականացվել են՝

- «Հայաստանի Հանրապետության 2003 թ. զենքի, ռազմամթերքի և ռազմական տեխնիկայի ներհանրապետական արտադրանքի գնումների պետական պատվերի մասին» ՀՀ կառավարության որոշման կատարման ապահովումը, կատարման կազմակերպումը և վերահսկումը,
- աշխատանքներ ոլորտին առնչվող միջպետական և միջկառավարական համաձայնագրերի և պայմանագրերի նախագծերի նախապատրաստման և առկա համաձայնագրերի կատարման վերահսկողության ուղղությամբ,
- աշխատանքներ ԱՊՀ երկրների հետ համագործակցության ընդլայնման ուղղությամբ:

2003թ. հոկտեմբերի 30-ին և 31-ին Երևանում կայացած ԱՊՀ անդամ պետությունների ռազմատնտեսական համագործակցության միջպետական հանձնաժողովի հերթական նիստի կազմակերպչական աշխատանքներ:

2004-2006թթ. միջնաժամկետ ծրագրի մշակում :

Ստեղծվել են ՔՊ առևտրի և սննդի, ինչպես նաև նյութատեխնիկական ապահովման հանրապետական ծառայություններ և մշակվել են իրենց կանոնադրությունները:

Նախարարության համակարգում ներկայումս գործում է 16 կազմակերպություն, որոնց ապրանքային արտադրանքի ծավալը 2003թ. կազմել է 741,4 մլն. դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է 5%-ով: Ապրանքային արտադրանքի իրացման ծավալը անցյալ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 65%: Միջին աշխատավարձը կազմել է 37,6 հազ. դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 20%-ով: Աշխատատեղերի քանակը նվազել է 104 – ով:

Աշխատանքներ են տարվել պետպատվերի կատարման կազմակերպման և վերահսկման ուղղությամբ:

Շարունակվել է գործունեությունը արտահանման ենթակա արտադրատեսակների մշակման և նոր արտաքին շուկաներ դուրս գալու ուղղությամբ:

Նախարարությունն աշխատանքներ է իրականացրել ոլորտին առնչվող միջպետական և միջկառավարական համաձայնագրերի և պայմանագրերի նախագծերի նախապատրաստման և առկա համաձայնագրերի կատարման վերահսկողության ուղղությամբ:

Այս ուղղությամբ աշխատանքները հատկապես ակտիվ են տարվել Ռուսաստանի Դաշնության հետ.

-համակարգվել են 2002 թ. հուլիսի 17- ին ստորագրված «ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև ՌԴ կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված պետական վարկերի գծով պարտքի մարման համար ՀՀ պետական սեփականություն հանդիսացող գույքը Ռուսաստանի Դաշնությանը փոխանցելու վերաբերյալ» Համաձայնագրի և 2002 թ. նոյեմբերի 5-ին ստորագրված՝ «ՌԴ կառավարության և ՀՀ կառավարության միջև Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող «Մարս», «Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ», «Երևանի ավտոմատ կառավարման համակարգերի ԳՀԻ», «Նյութաբանություն գիտաարտադրական ձեռնարկություն» ՓԲԸ-ի բաժնետոմսերը Ռուսաստանի Դաշնությանը որպես սեփականություն փոխանցելու վերաբերյալ» համապատասխան միջկառավարական Արձանագրությունների կետերի հանձնարարականների կատարման աշխատանքները,

- կազմվել և ՌԴ արդյունաբերության, գիտության և տեխնոլոգիաների նախարարություն են ներկայացվել ՌԴ-ի և ՀՀ-ի միջև 1994թ. մարտի 30 - ին ստորագրված «ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև արդյունաբերության պաշտպանական ճյուղերի ձեռնարկությունների միջև արտադրական և գիտատեխնիկական կոոպերացիայի մասին» և 23.12.1993թ. Աշխաբադում ստորագրված «ԱՊՀ անդամ-պետությունների ձեռնարկությունների արտադրական կոոպերացիայի խթանման մեխանիզմների և ընդհանուր պայմանների

մասին» Համաձայնագրերի շրջանակներում փոխադարձ կոոպերացիայի առաջարկի և պահանջարկի վերաբերյալ ցանկերը:

Աշխատանքներ են իրականացվել ԱՊՀ երկրների հետ համագործակցության ընդլայնման ուղղությամբ. մասնավորապես նախապատրաստվել են ՀՀ կառավարության 3 և ՀՀ վարչապետի 1 որոշումներ:

Աշխատանքներ են տարվել Ուկրաինայի և Բելառուսի Հանրապետության հետ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող արտադրությունների և արտադրատեսակների համատեղ արտադրության կազմակերպման և արտադրական կոոպերացիայի զարգացման ուղղությամբ:

«Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի միջև արտադրական կոոպերացիայի մասին» Համաձայնագրի նախագծի շրջանակներում ներկայացվել են համագործակցության վերաբերյալ առաջարկություններ:

Աշխատանքներ են տարվել նաև համակարգի կազմակերպությունների և արտասահմանյան մի շարք երկրների համապատասխան կազմակերպությունների միջև համագործակցության զարգացման ուղղությամբ /Թունիս, Սլովենիա և այլն /:

Համաձայն ՀՀ կառավարության համապատասխան որոշումների՝ 2003 թվականի գարնանային և աշնանային զորակոչը կազմակերպելու նպատակով պատրաստվել են համապատասխան հրամաններ:

Պատրաստվել են մեթոդական ցուցումներ՝ ըստ ոլորտների, զորահավաքային նախապատրաստության ծրագրերի կազմման վերաբերյալ /գաղտնի/:

Համակարգի կազմակերպությունների հետ համատեղ կատարվել են զորահավաքային առաջադրանքների հետ կապված աշխատանքներ /գաղտնի/:

Ամփոփվել են զորահավաքային նախապատրաստության վերաբերյալ վիճակագրական հաշվետվությունները /գաղտնի/:

Չի ապահովվել զորահավաքային նախապատրաստության ոլորտում անհրաժեշտ ֆինանսավորում:

Անցկացվել են նախարարությունում ՇՈՒ ՔՊ միջոցառումներ: Մասնակցություն է ցուցաբերվել Արմավիրի, Արարատի, Արագածոտնի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերում հրամանատարական-շտաբային ուսումնավարժություններին:

Կատարվել են աշխատանքներ ենթակա ընկերություններում անվտանգության տեխնիկայի միջոցառումների ուղղությամբ:

2004 թվականին նախատեսվում է՝

Մասնակցություն «Հայաստանի Հանրապետության 2004թ. զենքի, զինամթերքի և ռազմական տեխնիկայի ներհանրապետական արտադրանքի գնումների պետական

պատվերի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակմանը, կատարման կազմակերպմանն ու վերահսկողությանը:

Աշխատանքներ արտաքին տնտեսական կապերի զարգացման ուղղությամբ, այդ թվում.

- աշխատանքներ ԱՊՀ երկրների հետ համագործակցության ընդլայնման ուղղությամբ, մասնակցություն ԱՊՀ անդամ պետությունների ռազմատնտեսական համագործակցության միջպետական հանձնաժողովի հերթական նիստին,
- համագործակցության ընդլայնում Ուկրաինայի և Բելառուսի Հանրապետության հետ,
- չափիչ-ստուգիչ համակարգերի ներդրում,
- ՀՀ կառավարության որոշումներից բխող միջոցառումներ (գաղտնի),
- ՀՀ տնտեսության զորահավաքային նախապատրաստության տարեկան ծրագրերի կազմում,
- ենթակա կազմակերպություններում ստուգումների անցկացում ՔՊ, անվտանգության տեխնիկայի և հակահրդեհային միջոցառումների կատարման կարգով,
- ՀՀ ԱԻՎ-ի ճգնաժամային կառավարման ինստիտուտի դասընթացներին նախարարության և ենթակա կազմակերպությունների մասնագետների մասնակցություն,
- ենթակա կազմակերպություններում համաձայն ՀՀ կառավարության որոշման լ ՔՊ կազմակերպությունների ստեղծում

2.8. Մասնավորեցման ոլորտ

2003 թվականի ընթացքում

- իրականացվել է նախարարության համակարգի ընկերությունների ցանկերի ճշտում, մասնավորեցման մասին ՀՀ կառավարության տարբեր որոշումներով մասնավորեցվող ընկերությունների կազմից առանձնացված ստորաբաժանումների գույքագրում,
- նախապատրաստվել և ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն է ներկայացվել 16 ընկերությունների և 5 անավարտ շինարարության օբյեկտների գույքի գնահատման ելակետային տվյալների փաթեթներ, որոնցից առ 31.12.2003թվականը մասնավորեցման մասին ՀՀ կառավարության որոշում է կայացվել 6-ի նկատմամբ :

Մասնավորեցման ծրագրում ընդգրկված 11 ընկերություններ (“Պոլիվինիլացետատ”, “Արդկապ”, “Աշտարակի տրիկոտաժի”, “Արարատի տրիկոտաժի”, Գավառի “Դավիթ”, Վանաձորի “Նոյ”, “Գուգարքի կարի”, “Նպարեղեն”, “Վանաձորի տրիկոտաժի”, “Սպիտակի շինմոնտաժային տրեստ”, “Վանաձորի ՇՄՇ” ՓԲԸ-ներ) դատարանների

որոշումներով գտնվում են սնանկացման գործընթացում, իսկ 4 ընկերություններում դեռևս տարբեր պատճառներով ձգձգվում են անշարժ գույքի գրանցման աշխատանքները, ինչի պատճառով հնարավոր չի եղել նշված ընկերությունների մասնավորեցման փաթեթների ժամանակին ներկայացումը:

2003թ. ընթացքում 3 ընկերություններ (“Գյումրու սառցակոմբինատ”, ”Նորաձև կոշիկի” և “Երէքսպոկենտրոն” ՓԲԸ-ներ) ՀՀ տնտեսական դատարանի որոշմամբ լուծարվել են, իսկ 2-ի (“Դողագործ-1” և “Նաիրիտ-2” ՓԲԸ-ներ) պետական բաժնետոմսերը փոխանցվել են այլ կազմակերպությունների:

2.9. Արտաքին տնտեսական քաղաքականության և արտաքին տնտեսական համագործակցություն ոլորտ

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են աշխատանքները հանրապետության արտաքին տնտեսական քաղաքականության վարման, արտաքին տնտեսական հարաբերությունների հետագա զարգացման, ոլորտի իրավապայմանագրային դաշտի համալրման և կատարելագործման, միջպետական տնտեսական համագործակցության զարգացման և Նախարարության արտաքին հարաբերությունների վարման և կոորդինացման ուղղությամբ: Կատարված աշխատանքները հիմնականում ուղղված են եղել արտաքին տնտեսական քաղաքականության հիմնական սկզբունքների պահպանմանն ու զարգացմանը և այս ոլորտում ենթակառուցվածքային միավորների հետագա կայացմանն ու աշխատանքների կատարելագործմանը, տնտեսավարող սուբյեկտների գործունեության ակտիվացմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքներ են իրականացվել հայ-բելառուսական, հայ-ուկրաինական, հայ-եգիպտական, հայ-ավստրիական, հայ-իրանական, հայ-չինական, հայ-ռուսական, հայ-վրացական միջկառավարական հանձնաժողովների գործունեության արդյունքում ստորագրված արձանագրություններով ամրագրված պարտավորությունների և ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման ուղղությամբ:

Մասնակցություն է ցուցաբերվել հայ-հնդկական և հայ-չինական միջկառավարական համատեղ հանձնաժողովների նիստերի անցկացման աշխատանքներին:

Նախապատրաստվել և 2003թ. հոկտեմբերի 5-6-ը Երևանում անց է կացվել տնտեսական համագործակցության հարցերով հայ-բելառուսական միջկառավարական հանձնաժողովի հինգերորդ նիստը:

Ի հետևումն 2002թ. դեկտեմբերի 9-ից 12-ը Թեհրանում կայացած համատեղ նիստի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների հաշվետու ժամանակահատվածում

աշխատանքներ են վարվել երկու երկրների տարածքներում անցկացվող ցուցահանդեսներին մասնակցության համար միմյանց արտոնյալ պայմանների տրամադրման նպատակով ցուցահանդեսային բնագավառում Փոխըմբռնման հուշագրի ստորագրման, Նորդուզ-Մեղրի սահմանամերձ շուկայի աշխատանքների ակտիվացման, երկու երկրների արտադրատեսակների ստանդարտների ճանաչման շուրջ քննարկումների, ինչպես նաև 2003թ. ընթացքում Թեհրանում ՀՀ արտադրանքի ցուցահանդեսի անցկացման ուղղությամբ:

2002թ. հոկտեմբերի 18-ից 19-ը Երևանում կայացած հայ-եգիպտական միջկառավարական հանձնաժողովի նիստի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների շրջանակներում Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության հետ համատեղ աշխատանքներ են տարվել Երևանում եգիպտական առևտրի կենտրոնի վերագործարկման ուղղությամբ, համատեղ քննարկումներ են անցկացվել ՀՀ-ում ԵԱՀ դեսպանության և շահագրգիռ այլ կազմակերպությունների հետ:

Աշխատանքներ են իրականացվել 2003թ. մարտի 19-ից 28-ը Եգիպտոսում կայացած Կահիրեի ամենամյա միջազգային ցուցահանդեսին ՀՀ կազմակերպությունների մասնակցության նախապատրաստման և կազմակերպման ուղղությամբ: Նույն ժամանակահատվածում նախապատրաստվել է նախարարության պատվիրակության այցը Եգիպտոս՝ թեթև արդյունաբերության, ինչպես նաև տնտեսության այլ բնագավառներում համագործակցության հնարավորությունները քննարկելու նպատակով:

2003թ. օգոստոսի 14-16-ը մասնակցություն է ցուցաբերվել Յալթայում կազմակերպված «ԱՊՀ անդամ-պետությունների միջև ազատ առևտրի գոտու ներդրման մեխանիզմը և օպտիմալ գործառնությունը» խորագրով միջազգային գիտաժողովին, ինչպես նաև ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի (UN ESCAP) հետ համագործակցության շրջանակներում 2003թ. հոկտեմբերի 2-3-ը ՀՀ ԱԳՆ-ի կողմից կազմակերպված «Գլոբալիզացիայի պայմաններում ՀՀ կարողությունների հզորացումը» խորագրով ազգային սեմինարին:

Համապատասխան նյութեր են նախապատրաստվել՝ կապված ՀՀ նախագահի 2003թ. սեպտեմբերի 18-19-ին Յալթայում կայացած ԱՊՀ գագաթաժողովին մասնակցության կազմակերպման հետ, ինչպես նաև վերոհիշյալի շրջանակներում Ռուսաստանի, Վրաստանի և Ուկրաինայի նախագահների հետ կայացած հանդիպումների նախապատրաստման, ՀՀ վարչապետի՝ Ուկրաինա այցի կազմակերպման շրջանակներում:

Մասնակցություն է ցուցաբերվել ԱՊՀ անդամ պետությունների ռազմատնտեսական Կոմիտեի 2003թ. հոկտեմբերի 30-ից 31-ը Երևանում կայացած հերթական նիստի նախապատրաստման և անցկացման աշխատանքներին:

Նախապատրաստվել և կազմակերպվել է 2003թ. նոյեմբերի 10-19-ը ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի (UN

ESCAP) փորձագետների խորհրդատվական այց Հայաստան, ինչպես նաև ս.թ. նոյեմբերի 12-13-ը վերոհիշյալ հանձնաժողովի հետ համագործակցության շրջանակներում անց է կացվել «Առևտրի ֆինանսավորման ենթակառուցվածքի զարգացման հարցեր» խորագրով ազգային սեմինար:

Քննարկվել են նաև ԱՊՀ շրջանակներում ստորագրմանը նախապատրաստվող 21 Համաձայնագրերի նախագծեր, փորձաքննության են ենթարկվել 13 միջազգային Համաձայնագրերի նախագծեր, քննարկվել է նաև 6 միջազգային Համաձայնագրերի կնքման նպատակահարմարությունը, սահմանված կարգով վարվել են աշխատանքներ՝ ուղղված 4 միջազգային Համաձայնագրերի վավերացման ապահովմանը:

Մշակվել են «Եվրոմիության երկրներում (նստավայրը՝ Բրյուսել) և Ամերիկայի Միացյալ Նահանգներում (նստավայրը՝ Վաշինգտոն) Հայաստանի Հանրապետության առևտրական ներկայացուցչություններ ստեղծելու մասին» և «Հայաստանի Հանրապետության կառավարության 1993 թվականի սեպտեմբերի 10-ի N 457 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերը, «2005թ. մարտի 25-ից սեպտեմբերի 25-ը Ճապոնիայի Աիչի նահանգում կայանալիք EXPO 2005 համաշխարհային ցուցահանդեսին ՀՀ մասնակցության մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծը:

2.10. Արտաքին առևտուր

Հայկական ապրանքների ներմուծման ժամանակ սակագնային և ոչ սակագնային արգելքների նվազեցման ուղղությամբ շարունակվել են բանակցությունները հայրենական արտադրության որոշ ապրանքներ Իրան ներմուծման ժամանակ սահմանափակումների նվազեցման ուղղությամբ:

Իրականացված աշխատանքների արդյունքում Մոսկվայի Համառուսաստանյան Ցուցահանդեսային Կենտրոնում 2003թ. հունվարի 16-ին տեղի է ունեցել «Հայաստան» տաղավարի պաշտոնական բացումը :

Իրականացվել են ՌԴ-ի և ՀՀ-ի միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հինգերորդ նիստի Արձանագրությունից բխող խնդիրների կատարմանն ուղղված աշխատանքներ, ինչի վերաբերյալ պարբերաբար զեկուցվել է ՀՀ կառավարությանը և ՌԴ-ի ու ՀՀ-ի միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հայկական մասի նախագահին:

Շարունակվել են ԱՊՀ պետությունների միջև Ազատ առևտրի գոտու լիակատար գործունեությունն ապահովող իրավապայմանագրային դաշտի ձևավորման

աշխատանքները, ինչպես նաև ԱՊՀ պետությունների տնտեսական համագործակցության ընդլայնմանն ուղղված այլ միջոցառումների իրականացումը:

ԱՊՀ տնտեսական խորհրդին ներկայացվել է Հայաստանի Հանրապետության առևտրային քաղաքականության ակնարկի ազգային զեկույցը և հայկական արտադրության մրցունակ ապրանքների ցանկը:

2.11. ԱՀԿ և ԵՄ հետ համագործակցություն

2002թ. ընթացքում իրականացված ինտենսիվ աշխատանքների արդյունքում ավարտին հասցվեց ԱՀԿ-ին ՀՀ անդամակցության գործընթացը, որի արդյունքում 2003թ. հունվարին Հայաստանը դարձավ ԱՀԿ անդամ:

Նախապատրաստվել է 2003թ. սեպտեմբերին Մեքսիկայի Կանկուն քաղաքում կայացած ԱՀԿ նախարարական V-րդ վեհաժողովին ՀՀ պաշտոնական պատվիրակության այցը:

ՀՀ գործարարների համար կազմակերպվել են բացատրական բնույթ կրող հանդիպումներ և ներկայացվել են այն հնարավորությունները, որոնք ԱՀԿ-ին անդամակցության արդյունքում ընձեռվել են ՀՀ-ի գործարարներին:

Իրականացվել են ԱՀԿ շրջանակներում ընթացող բանակցային (ազատականացման) գործընթացի հետ կապված ընթացիկ աշխատանքներ մի շարք հարցերի շուրջ, մասնավորապես՝ Սինգապուրյան հարցեր, Ոչ գյուղատնտեսական ապրանքների շուկայի մատչելիություն, Արդյունաբերական ապրանքների առևտուր, Մտավոր սեփականություն և այլն: ՀՀ գործադիր իշխանության պաշտոնյաների և գործարարների համար կազմակերպվել է աշխատանքային այց ԱՀԿ քարտուղարություն (Շվեյցարիա, Ժնև):

ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակի հետ համատեղ մշակվել և բոլոր դոնոր կազմակերպություններին է ներկայացվել ԱՀԿ-ին ՀՀ անդամակցությունից հետո անհրաժեշտ տեխնիկական աջակցության պահանջները (ըստ ոլորտների) նկարագրող փաստաթուղթը:

ՀՀ-ից ԵՄ արտահանումը խթանելու նպատակով մշակվել և սահմանված կարգով քննարկման են ներկայացվել ՀՀ կառավարության որոշման նախագծեր, մասնավորապես՝ ՀՀ-ից ԵՄ արտահանվող ձուկ/ձկնամթերքի արտահանումը կարգավորող փաստաթղթերը:

Ուսումնասիրվել է ՀՀ կառավարության և Եվրոհամայնքի միջև տեքստիլ արտադրանքի առևտրի մասին համաձայնագիրը և համապատասխան առաջարկներ են ներկայացվել համաձայնագրի վերաբանակցման վերաբերյալ:

Լեհաստանի և Չեխիայի առևտրատնտեսական դաշտին առնչվող համապատասխան օրենսդրությունը ԵՄ պահանջներին համապատասխանեցնելու ընթացքը և ԱՀԿ համագործակցությունն ուսումնասիրելու նպատակով նախապատրաստվել է ՀՀ պետական

կառավարման համակարգի համապատասխան պաշտոնյաների աշխատանքային այցն այդ երկրներ: Իրականացվել են աշխատանքներ ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի (UN ESCAP), ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO), ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (UNECE), ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովի (UNCTAD) և այլ միջազգային կազմակերությունների հետ:

Հաշվետու ժամանակաշրջանում ամբողջությամբ կատարվել է Հայաստանի Հանրապետության ԱՀԿ անդամակցության աշխատանքային խմբի հաշվետվության 217 կետով ամրագրված ՀՀ ԱՀԿ նախնական ծանուցումների տրամադրման հետանդամակցային պարտավորությունը: Համակարգման, տեղեկատվության փոխանակման և քննարկումների ընդգրկուն աշխատանք է տարվել ՀՀ-ում ԱՀԿ հարցման կետերի, ՀՀ տարբեր նախարարությունների և պետական կառավարման այլ մարմինների հետ, ինչպես նաև ուսումնասիրվել և մշակվել են համապատասխան նյութեր ու փաստաթղթեր: Արդյունքում ԱՀԿ Քարտուղարությանն են տրամադրվել ԱՀԿ անդամակցությանը հաջորդող նախնական ծանուցումները՝ ըստ ԱՀԿ հետևյալ համաձայնագրերի՝

- ՄԱԳՀ-1994-ի (GATT-94) VI Հոդվածի (Հակագնագցում) իրականացման մասին,
- ՄԱԳՀ-1994-ի VII Հոդվածի (Մաքսային արժեքի գնահատում) իրականացում,
- Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագիր,
- Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին,
- Ներմուծման լիցենզավորման ընթացակարգերի մասին,
- Նախաառաքումային ստուգման մասին, Ծագման կանոնների մասին,
- Պաշտպանական միջոցների մասին,
- Լրավճարների և փոխհատուցման միջոցների մասին,
- Սանիտարական և բուսասանիտարական միջոցների կիրառման մասին,
- ՄԱԳՀ-1994-ի XVII Հոդվածի (Պետական առևտրային ձեռնարկություններ) մեկնաբանության մասին,
- Առևտրի տեխնիկական խոչընդոտների մասին, Առևտրին առնչվող ներդրումային միջոցների մասին:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել են ԱՀԿ 19 համաձայնագրերից բխող ծանուցման ենթակա փաստաթղթերի ցանկը, ծանուցումների ժամանակացույցը և ձևերը:

Շարունակվել է համագործակցությունը Էներգետիկայի Խարտիայի Քարտուղարության հետ: «Էներգետիկ խարտիայի» համաձայնագրի շրջանակներում ծանուցումներ իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման

նպատակով հարցումներ, խորհրդակցություններ և քննարկումներ են իրականացվել ԱՀԿ հարցման կետերի, համապատասխան գերատեսչությունների հետ: Հավաքագրված տեղեկատվության ուսումնասիրման և մշակման արդյունքում պատրաստվել և ութ համաձայնագրերի շրջանակներում «Էներգետիկ խարտիայի» Քարտուղարություն են ուղարկվել ծանուցումներ:

Իրականացվել է ծավալուն աշխատանք միջազգային առևտրի գործառույթների և տեղեկատվական հոսքերի պարզեցման, համօրինակման ու միասնականացման նպատակով ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի /ՄԱԿԵՏՀ/ կողմից մշակված և ներկայացված առաջարկությունների/խորհուրդների փաթեթի ուսումնասիրման ուղղությամբ: Համապատասխան նախարարությունների և պետական կառավարման այլ մարմինների հետ համագործակցության միջոցով ուսումնասիրվել են նաև ՀՀ-ում այդ առաջարկությունների/խորհուրդների կիրառման ծավալները, նրանց օգտագործման ընթացքում առաջացող դժվարություններն ու խոչընդոտները:

2004 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել ՀՀ գերատեսչությունների կողմից մշակվող օրենսդրական նախաձեռնությունների ուսումնասիրություն և ԱՀԿ համաձայնագրերի դրույթների պահանջներին, ինչպես նաև ՀՀ-ի կողմից ստանձնած պարտավորություններին համապատասխան կարծիքների ներկայացում, ԱՀԿ շրջանակներում ընթացող բանակցային (ազատականացման) գործընթացի հետ կապված ընթացիկ աշխատանքներ, ԱՀԿ քարտուղարության, ինչպես նաև ԱՀԿ անդամ/անդամակցող պետությունների հետ առօրյա աշխատանքներ:

Իրականացվելու է ՀՀ գերատեսչությունների կողմից մշակված օրենսդրական նախաձեռնությունների ուսումնասիրություն, և ԵՄ-ի հետ, ԳՀՀ իրականացման շրջանակներում, ՀՀ-ում գործող առևտրատնտեսական դաշտին առնչվող ընթացակարգերի համապատասխանեցման առաջարկների ներկայացում, ինչպես նաև ԳՀՀ շրջանակներում նախատեսվող ՀՀ-ԵՄ տնտեսական հարցերով համագործակցության ենթակոմիտեի չորրորդ նիստի նախապատրաստական ու անցկացման աշխատանքների իրականացում և ԳՀՀ շրջանակներում 2004թ. Բրյուսելում կայանալիք ՀՀ-ԵՄ Համագործակցության կոմիտեի հինգերորդ նիստի նախապատրաստական աշխատանքների իրականացում:

2004թ. ծանուցումներ են իրականացվելու ԱՀԿ հետևյալ համաձայնագրերի ներքո՝ Գյուղատնտեսության մասին, Ներմուծման լիցենզավորման ընթացակարգերի մասին, ՄԱԳՀ-1994-ի VII Հոդվածի (Մաքսային արժեքի գնահատում) իրականացում, Ծագման կանոնների մասին, Նախաառաքումային ստուգման մասին, Քանակական սահմանափակումների մասին, ՄԱԳՀ-1994-ի (GATT-94) VI Հոդվածի (Հակագնագցում) իրականացման մասին, Լրավճարների և փոխհատուցման միջոցների մասին, ՄԱԳՀ-1994-ի XVII Հոդվածի (Պետական առևտրային ձեռնարկություններ) մեկնաբանության մասին, Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագիր, Առևտրի տեխնիկական խոչընդոտների մասին, Վճարային հաշվեկշռի դրույթների մասին:

2.12. Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտ

2003 թվականի ընթացքում ՀՀ-ում ՓՄՁ ոլորտի զարգացման ուղղությամբ ձեռնարկված քայլերն ուղղված են եղել Հայաստանում ՓՄՁ զարգացման քաղաքականության ու ռազմավարության, ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերի մշակման ու իրականացման, ՓՄՁ ոլորտի պետական աջակցությանն ուղղված համապատասխան միջոցառումների իրականացմանը:

2003 թվականին մշակվել և ՀՀ կառավարության N1673-Ն որոշմամբ 11.12.2003թ. հաստատվել է ՓՄՁ պետական աջակցության 2004թ. ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է ստեղծել Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի (Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի) մասնաճյուղեր ՀՀ ևս 3 մարզերում՝ Լոռու, Կոտայքի և Արագածոտնի, ինչպես նաև բիզնես ինկուբատոր՝ ՀՀ Շիրակի մարզում (ք. Գյումրի) և տեխնոպարկ՝ Երևանում:

2003թ. հունվարին Նախարարությունը կազմակերպել է «Փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանում» 2-րդ հանրապետական համաժողովը, որին մասնակցել են օրենսդիր և գործադիր մարմինների, գործարար համայնքի, ինչպես նաև Հայաստանում ՓՄՁ ոլորտի զարգացման ծրագրեր իրականացնող միջազգային կազմակերպությունների ավելի քան 400 ներկայացուցիչներ, այդ թվում՝ ՀՀ մարզերից: 2-րդ հանրապետական համաժողի հիմնական նպատակն էր ամփոփել ՓՄՁ ոլորտի ձեռքբերումները 1-ին համաժողովից հետո ընկած ժամանակահատվածում, բարձրացնել առկա հիմնախնդիրները և առաջարկել հնարավոր լուծումներ:

2003թ. նոյեմբերի 17-18-ը Երևանում տեղի ունեցած Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության Կազմակերպության (ԵԱՀԿ) 12-րդ տնտեսական համաժողովի առաջին նախապատրաստական սեմինարի շրջանակներում «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի հետ համատեղ կազմակերպվել է «ՓՄՁ աջակցություն - քաղաքականություն և ծրագրեր» խորագրով ցուցահանդես:

Համաշխարհային Բանկի կառուցվածքային բարեփոխումների SAC-5 վարկի նախապատրաստման համար ճապոնական TF 050512 դրամաշնորհի շրջանակներում «ՓՄՁ քաղաքականության միջամտության բացահայտում և ՓՄՁ զարգացման քաղաքականության իրականացման մեխանիզմների հստակեցում» ծրագրի իրականացման համար մշակվել է տեխնիկական առաջադրանք և իրականացվել է ծրագիրը, որի արդյունքում ընտրված 4 տեղացի փորձագետների և 2 խորհրդատվական ընկերության կողմից 16 ՓՄՁ սուբյեկտների տրամադրվել են գործարար ծառայություններ:

2003 թվականի ընթացքում մի շարք երկրների (Իտալիա, Ճապոնիա, Հունաստան և այլն), ինչպես նաև միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների հետ (OSCE, UNDP, UN ECE, USAID, WB և այլն) երկկողմ համագործակցության շրջանակներում ներկայացվել են առաջարկություններ Հայաստանում ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված համապատասխան միջոցառումների իրականացման ուղղությամբ:

ՓՄՁ ոլորտի հեռանկարային զարգացմանն ու այդ նպատակով իրականացվող պետական աջակցության ընդլայնմանն էր ուղղված «Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2003թ. ծրագիրը»՝ հաստատված ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 19-ի N 2172-Ն որոշմամբ, որի իրականացման համար պետական բյուջեից հատկացվել էր 250 մլն. դրամ՝ գերազանցելով 2002թ. պետական բյուջեից հատկացված միջոցների գումարը ավելի քան 12 անգամ:

Ծրագիրն իրականացվել է, բացի այդ ընդլայնվել են նրա ծրագրային միջոցառումների շրջանակները՝ դոնոր կազմակերպություններից ավելի քան 44 մլն. դրամի չափով միջոցների ներգրավման հաշվին:

Պետական աջակցությունը ՀՀ տարածաշրջաններում առավել արդյունավետ իրականացնելու նպատակով ընդլայնվել է Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի գործունեությունը, ստեղծվել են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի մարզային 3 մասնաճյուղեր ՀՀ Շիրակի (ք. Գյումրի), Տավուշի (ք. Իջևան) և Սյունիքի (ք. Սիսիան) մարզերում (Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը ՀՀ-ում ՓՄՁ պետական քաղաքականություն իրականացնող հիմնական կառույցն է):

ՓՄՁ պետական աջակցության 2003թ. ծրագրի շրջանակներում ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական և ներդրումային աջակցության նպատակով Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի հետ համատեղ մշակվել է ՓՄՁ սուբյեկտների վարկային երաշխիքների տրամադրման սխեման և մեխանիզմները: Փաթեթը մշակվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ և արժանացել է ՀՀ Կենտրոնական բանկի, Գերմանահայկական հիմնադրամի, Հայաստանի բանկերի ասոցիացիայի դրական եզրակացությանը: Ընտրվել և Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի Հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատվել են ծրագրի գործընկեր 5 բանկերը:

ՓՄՁ պետական աջակցության 2003 թվականի ծրագրի շրջանակներում տեղեկատվական աջակցություն է ստացել ավելի քան 3500 ՓՄՁ սուբյեկտ:

Ընդհանուր առմամբ ՓՄՁ պետական աջակցության ծրագրի շրջանակներում աջակցություն է ստացել ավելի քան 4500 ՓՄՁ սուբյեկտ, որոնց ավելի քան 70%-ը՝ ՀՀ մարզերում:

Մասնավորապես, ՓՄՁ սուբյեկտների տեղեկատվական աջակցության և մասնագիտական հմտությունների զարգացման նպատակով իրականացվել են մի շարք

մասնագիտական և տեղեկատվական բնույթի գործարար ուղեցույցների, բրոշյուրների մշակում և հրատարակում, այդ թվում՝ «Ինչպես սկսել ձեռնարկատիրական գործունեություն Հայաստանում» ուղեցույցը, հաշվապահական հաշվառման նոր համակարգով աշխատող փոքր և միջին ձեռնարկություններին գործնական օգնություն ցուցաբերելու նպատակով 4 գրքից բաղկացած պարզեցված ուղեցույցը, ինչպես նաև Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի տեղեկատվական գրքույկը: Հրատարակվել են նաև «ISO 9001-2000 որակի կառավարման համակարգերի ներդրման աջակցության ծրագիրը» պարզաբանող տեղեկատվական գրքույկ և վերահրատարակվել է «ՓՄՁ աջակցության ծրագրերի և ծառայություններ մատուցող կազմակերպությունների» լրամշակված տեղեկագիրը:

Խորհրդատվական աջակցություն է ստացել 400 ՓՄՁ սուբյեկտ, այդ թվում ՀՀ մարզերում կազմակերպված «բաց դռներին» 370 ՓՄՁ սուբյեկտ ստացել է հարկային և մաքսային, հաշվապահական հաշվառման և ֆինանսների կառավարման ոլորտների վերաբերյալ անվճար խորհրդատվություն:

Բացի այդ, արտահանման հեռանկար ունեցող 11 ՓՄՁ սուբյեկտների համար ստեղծվել են ինտերնետային էջեր և որակի կառավարման համակարգերի ISO 9001-2000 ներդրման ուղղությամբ աջակցություն է ստացել 13 ՓՄՁ սուբյեկտ:

Ծրագրի շրջանակներում ուսուցողական աջակցություն են ստացել 610 ՓՄՁ սուբյեկտ, որից 500-ը՝ ՀՀ մարզերում:

Ըստ նախնական գնահատման, ՓՄՁ տեսակարար կշիռը 2003թ. թողարկված ՀՆԱ-ի մեջ կազմել է շուրջ 38%՝ 2002թ. նկատմամբ 3 տոկոսային կետով ավելի:

2003 թվականի ընթացքում գրանցվել են շուրջ 8000 նոր ՓՄՁ սուբյեկտներ՝ ապահովելով մոտ 20 հազար նոր աշխատատեղեր:

ՓՄՁ ոլորտի առջև ծառացած հիմնախնդիրները պայմանավորված են մի շարք ինչպես սուբյեկտիվ, այնպես էլ օբյեկտիվ գործոններով՝ կապված հարկային, մաքսային, ֆինանսավարկային համակարգերի հետ:

2004թ. ծրագրով նախատեսվում է ծրագրային միջոցառումների ավելացման հետ մեկտեղ ընդլայնել ՓՄՁ սուբյեկտներին ցուցաբերվող տեղեկատվական, խորհրդատվական, ուսուցողական, ինչպես նաև ֆինանսական և ներդրումային աջակցությունը:

2.13. Զբոսաշրջության ոլորտ

2003թ. զբոսաշրջության քաղաքականությունը նպատակաուղղված է եղել ոլորտի զարգացման համար գործարար միջավայրի հետագա բարելավմանը, միջազգային զբոսաշրջության շուկայում Հայաստանի, որպես զբոսաշրջության երկրի, վարկանիշի ամրապնդմանը, մրցակցային միջավայրի օրենսդրական կարգավորման կատարելագործմանը, ոլորտի մարդկային կապիտալի և ենթակառուցվածքի զարգացմանը, որակյալ զբոսաշրջային արդյունքի ձևավորմանը, ինչպես նաև համայնքներում զբոսաշրջային ձեռնարկատիրության զարգացման միջոցով տարածքների սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը:

ՀՀ կառավարությունը հաստատել է «ՀՀ տարածքում կուրորտային առողջարանների և հանգստյան տների զարգացման հայեցակարգը» և «ՀՀ տարածքում կուրորտային առողջարանների և հանգստյան տների զարգացման պետական ծրագիրը», որտեղ ընդգրկված է Հայաստանում առողջարանային զբոսաշրջային զարգացման ռազմավարությունը: Համայնքներում տնտեսական ակտիվության բարձրացման և զբաղվածության խնդիրների լուծման նպատակով ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է ՀՀ համայնքներում զբոսաշրջության զարգացման ծրագիրը:

2003թ. շահագործման են հանձնվել 2 բարձրակարգ հյուրանոց՝ «Եվրոպա» համալիրը Երևանում և «Ծափաթաղ» համալիրը Գեղարքունիքի մարզում:

Հայաստանը մասնակցել է Լոնդոնի WTM, Բեռլինի ITB, ASTA կազմակերպության Վաշինգտոնի, Թբիլիսիի «Մետաքսե ճանապարհ» և Կիևի միջազգային զբոսաշրջային տոնավաճառներին:

Զբոսաշրջության համայնքային զարգացման ծրագրի շրջանակներում տպագրվել են Իջևանի և Դիլիջանի զբոսաշրջային ենթակառուցվածքները գովազդող պրակներ:

Ոլորտի մասնագետներ են պատրաստվել և վերապատրաստվել Եգիպտոսում, Իտալիայում, Ճապոնիայում, Գերմանիայում: 2003թ. ճանաչողական նպատակներով կազմակերպվել են զբոսաշրջության բնագավառի լրագրողների և տուրօպերատորական խմբերի այցելություններ:

Հայաստան-Հունաստան համագործակցության շրջանակներում նախապատրաստական աշխատանքներ են կատարվել Հայաստանում միջին մասնագիտական կրթության տուրիզմի դպրոց հիմնելու ուղղությամբ.

2003թ. սեպտեմբերին Հայաստանում առաջին անգամ անցկացվեց Զբոսաշրջության Համաշխարհային Կազմակերպության միջազգային ուսումնական սեմինարը, որի արդյունքում սերտիֆիկատներ են ստացել ոլորտի շուրջ 100 մասնագետներ:

Հայկական պատվիրակությունը մասնակցել է՝

- Համաշխարհային ճանապարհորդության և զբոսաշրջության խորհրդի 3-րդ Գլոբալ վեհաժողովի աշխատանքներին Պորտուգալիայում,
- ՀՁԿ Գլխավոր Ասամբլեայի 15-րդ նստաշրջանի աշխատանքներին Չինաստանում:

Մշակվել է «Հայաստանի Հանրապետության և Մոլդովայի Հանրապետության կառավարությունների միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրի նախագիծը:

Գնահատելով Հայաստանի զբոսաշրջության ոլորտում կատարված զարգացումները, վերլուծելով տիրող իրավիճակը, կատարելով մանրակրկիտ ուսումնասիրություններ՝ բացահայտվեցին առաջնահերթ լուծում պահանջող մի շարք հետևյալ խնդիրները՝

- Զբոսաշրջության համար վիզաների տրամադրման դեռևս ոչ լիարժեք պայմանները,
- Ենթակառուցվածքի թերզարգացությունը և նրա առանձին տարրերի ծառայությունների ցածր որակը, հատկապես՝ մայրաքաղաքից դուրս:

2004 թ. ընթացքում ծրագրված հիմնական միջոցառումները ուղղված են լինելու՝

1. «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի ընդունումից բխող հետևյալ իրավական ակտերի նախագծերի մշակմանը և ՀՀ կառավարություն ներկայացմանը.

- *«Հյուրանոցային տնտեսության սուբյեկտների որակավորման կարգը»*
- *«Հյուրանոցային ծառայությունների մատուցման կանոնները»,*
- *«Զբոսավարի և ուղեկցորդի լիցենզավորման կարգերը»:*

2. ՀՀ զբոսաշրջության ոլորտում տեխնոլոգիական կառավարման համակարգի ներդրմանը:

3.Զբոսաշրջության ոլորտի մարքեթինգային ուսումնասիրությունների իրականացման բազայի ստեղծմանը:

4.Զբոսաշրջության բնագավառի կառավարչական, մարքեթինգի և սպասարկման ոլորտի միջին կարգի մասնագետ կադրերի պատրաստմանը:

5 Միջազգային զբոսաշրջային շուկայում հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացմանը:

2.14. Մտավոր սեփականության պահպանության ոլորտ

Գյուտեր և օգտակար մոդելներ: 2003թ. ՀՀ մտավոր սեփականության գործակալությունն է ներկայացվել 155 գյուտի եւ 6 օգտակար մոդելի հայտ, որոնցից 156-ը՝ ազգային հայտատուներից, 5-ը՝ օտարերկրյա հայտատուներից:

2003թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ ստացված գյուտերի եւ օգտակար մոդելների հայտերի ընդհանուր քանակը 1992 թվականից սկսած կազմել է 1980:

2003թ. PCT ընթացակարգով Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության միջազգային բյուրո (ԺՆՆ) առաքված հայտերի ընդհանուր քանակը կազմել է 34:

Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի ընթացակարգով ազգային հայտատուների կողմից 2003թ. ներկայացվել է գյուտի 1 հայտ: Եվրասիական արտոնագրային գերատեսչություն (Մոսկվա) առաքված հայտերի ընդհանուր քանակը կազմում է 7: 150 հայտերով անցկացվել է նախնական փորձաքննություն, և որոշում է կայացվել հայտերի պաշտոնական հրապարակման մասին:

Գործավարությունն ավարտվել է 186 հայտերով: 2003թ. տրվել է գյուտի 169 արտոնագիր, օգտակար մոդելի՝ 7:

Ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ: 2003 թվականին ազգային ընթացակարգով ստացվել են ապրանքային նշանի գրանցման 927 հայտ (որոնցից 692-ը՝ ազգային հայտատուներից) և ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքի 1 հայտ: 725 հայտերով կատարվել է նախնական փորձաքննություն:

Ետ են կանչվել 32 հայտ, իսկ 51 հայտի նկատմամբ կայացվել է մերժման մասին որոշում:

Գրանցվել են 602 ապրանքային և սպասարկման նշաններ (որոնցից 411-ը՝ ազգային հայտատուներից):

Մադրիդյան համաձայնագրի և դրա արձանագրության շրջանակներում Հայաստանի Հանրապետության նշմամբ 2003թ. նոյեմբերի 7-ի դրությամբ ստացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին 1411 ծանուցում:

Նախնական մերժման մասին կայացվել է 426 որոշում, իսկ վերջնական մերժման մասին՝ 317: Ստացվել է 23 արդյունաբերական նմուշի հայտ (որոնցից 6-ը՝ ազգային հայտատուներից): Դրանցից 8-ի համար կայացվել է որոշում արտոնագիր տալու մասին:
Տրվել է արդյունաբերական նմուշի 12 արտոնագիր:

Ֆիրմային անվանումներ: 2003թ. ստացվել Է ֆիրմային անվանման գրանցման 3194 հայտ: Գրանցվել է ընդամենը 3050 անվանում, մերժվել է 144-ը: Ֆիրմային անվանման մեջ

“հայ”, “Հայաստան”, “հայկական” բառերի եւ դրանց թարգմանությունների օգտագործման համար տրվել է 11 թույլտվություն:

Տեղեկատվական տեխնոլոգիաներ: 2003թ. լազերային սկավառակների վրա հրապարակվել են «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրի 4 համար՝ N 1 (25), N 2 (26), N 3(27) և N 4(28): Դրանց մեջ ընդգրկվել են տեղեկություններ 169 գյուտի, 7 օգտակար մոդելի, 12 արդյունաբերական նմուշի արտոնագրերի, 401 գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին, ինչպես նաև արտոնագրերի եւ ապրանքային նշանների զիջման պայմանագրերի և լիցենզային պայմանագրերի գրանցման մասին (63 գրանցում):

Նախարարությունը շարունակել է Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոնի արտոնագրային ֆոնդի համալրումը: Բացի պաշտոնական տեղեկագրերից կենտրոնին տրամադրվել են օտարերկրյա պետությունների արտոնագրային գերատեսչություններից ստացված տեղեկատվությունը և որոշ ծրագրեր:

Ի կատարումն «Կոմպակտ սկավառակների վրա արտոնագրային տեղեկատվական տարածաշրջանային համատեղ արտադրանքի թողարկման մասին» համաձայնագրի, որին մասնակցում են ԱՊՀ 9 երկրներ, թողարկվել են «CISPATENT» անվանմամբ 12 կոմպակտ սկավառակներ, որոնց 4 համարներում զետեղված են Հայաստանի Հանրապետությունում արտոնագիր ստացած 169 գյուտի մասին մատենագիտական տվյալներ: Վերոհիշյալ համաձայնագրի կատարման աշխատանքները շարունակվում են:

Մտավոր սեփականության գործակալության ինտերնետային էջում զետեղվել են «Վիճակագրական տվյալներ», «Գյուտերի հրապարակված հայտեր», «Տարեկան հաշվետվություն», «Ձևաթղթեր», «Բանկային տվյալներ», «Արտոնագրային հավատարմատարներ» եւ «Կոնտակտային ինֆորմացիա» բաժինները: Մուտքի էջին տրվել է գրաֆիկական տեսք, որից ընտրվում է համապատասխան լեզուն:

Լիցենզային և զիջման պայմանագրերի գրանցում: 2003թ. ընթացքում քննարկվել և գրանցվել են 68 պայմանագրեր, որոնցից 53-ը՝ ապրանքային նշանների զիջման մասին, 14-ը՝ ապրանքային նշանների օգտագործման լիցենզիա տալու մասին և մեկը՝ գյուտի արտոնագրի զիջման մասին:

Այլ աշխատանքներ: Հաշվետու ժամանակաշրջանում մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ ներկայացվել է 29 բողոք և մեկ դիմում ապրանքային նշանը ՀՀ-ում հանրահայտ ճանաչելու վերաբերյալ: Անցկացվել է Բողոքարկման խորհրդի 4 նիստ, քննարկվել և որոշումներ են կայացվել 47 գործերով:

2003թ. Մտավոր սեփականության գործակալության կողմից կատարվող գործառնությունների համար հանրապետության բյուջե է մուտքագրվել 147569.9 հազ. դրամ:

2.15. Ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման գործունեություն

Ոլորտի իրավիճակը բնութագրող հիմնական ցուցանիշները

1. Ստանդարացման բնագավառ

1.1 Հայաստանի ստանդարտների ընդունում (ՀՍՏ) –165 հատ

1.2 Միջպետական ստանդարտների ընդունում -143 հատ

1.3 Միջազգային ստանդարտների ընդունում - 9 հատ

1.4 Տեխնիկական պայմանների հաստատում - 340 հատ

2. Չափագիտության բնագավառ

2.1. Ստուգաչափման ենթարկված չափման միջոցներ -329600/27 հատ/տեսակ

2.2. Սարքավորումների չափագիտական վկայագրում -284 հատ

2.3. Չափման միջոցների պետական փորձարկում - 456 հատ

2.4 Չափման միջոցների տեսակի հաստատում - 185 հատ

2.5 Չափման միջոցների արտադրության և նորոգման լիցենզիաների հատկացում - 3 հատ

2.6. Չափման միջոցների լիցենզավորման համար փաստաթղթերի փորձաքննություն կատարելու լիցենզիայի տրամադրում - 2 հատ

3. Հավատարմագրման բնագավառ

3.1. Ապրանքատեսակների որակի սերտիֆիկատների հատկացում - 5384 հատ

3.2 Սերտիֆիկացման մարմինների հավատարմագրում -2 հատ

3.3 Փորձարկման լաբորատորիաների հավատարմագրում – 6 հատ

4. Որակի վերահսկողություն

1.1 Արտադրանքի և ծառայությունների նորմատիվ փաստաթղթերով սահմանված պարտադիր պահանջների և համապատասխանության պարտադիր հավաստման կանոնների պահպանման պետական վերահսկողության վերաբերյալ ստուգումներ -1720 հատ

Նախարարությունը կազմակերպել է Ստանդարտացման Միջպետական Խորհրդի 2003թ. մայիսի 20-22-ը Երևանում կայացած 23-րդ նիստի նախապատրաստման և անցկացման աշխատանքները: Հանդես է եկել մի շարք առաջարկություններով:

Մշակվել են ստանդարտացման Գիտատեխնիկական խորհրդի կազմակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերը:

Մշակվել է «Հայաստանի Հանրապետության 2003-2004թթ. առաջնահերթ տեխնիկական կանոնակարգերի մշակման ցանկը և ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Նախարարությունը կազմակերպել է Ստանդարտացման Միջպետական Խորհրդի (Ì ÃÑ) և Ռուսաստանի Դաշնության Պետստանդարտի կողմից ներկայացված ստանդարտների, որոշումների նախագծերի ուսումնասիրությունը և պատասխանների նախապատրաստումը: Գործողության մեջ են դրվել ընդունված ստանդարտները (ԳՕՍՏ-երը):

Կատարվել են 2004 թվականին նախարարությունների և այլ գերատեսչությունների կողմից գնման ենթակա ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ամփոփ անվանացանկերի վերաձևակերպումները և պարբերաբար ներկայացվել են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ավելի քան 100 ցանկ):

Նախապատրաստվել և Ստանդարտացման Գիտատեխնիկական Խորհրդի հաստատմանն են ներկայացվել «Ստանդարտների և որակի ազգային ինստիտուտի» ՓԲԸ և շահագրգիռ գերատեսչությունների կողմից ներկայացված համապատասխան ստանդարտների նախագծերը: Հաշվետու ժամանակաշրջանում կայացել է 3 նիստ և գործողության մեջ են դրվել ավելի քան 300 ստանդարտներ, դասակարգիչներ, ստանդարտների փոփոխություններ և այլն:

Քննարկման և համաձայնեցման է ներկայացվել ԱՊՀ անդամ պետությունների ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման Միջպետական Խորհրդի, Ստանդարտների Բյուրոյի և Ռուսաստանի Դաշնության Պետստանդարտի կողմից ներկայացված 50-ից ավելի միջպետական նորմատիվային փաստաթղթեր, ստանդարտներ, քվեաթերթիկներ:

Քննարկմանն և ՀՀ կառավարության համաձայնեցմանն են ներկայացվել ԱՊՀ երկրների տնտեսական Խորհրդի կողմից ներկայացված միջպետական համաձայնագրեր:

Նախապատրաստվել է չափման միջոցների ներմուծման նոր կարգը և ներկայացվել ՀՀ կառավարություն (ՀՀ կառավարության 2003թ. հուլիսի 31-ի թիվ 965-Ն որոշում): Նախապատրաստվել են այդ կարգից բխող իրավական այլ ակտեր:

Եռամսյակը մեկ ամփոփվել և ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն է ներկայացվել սերտիֆիկացման մարմինների և չափագիտական ծառայությունների կողմից ներկայացվող հաշվետվությունները:

Քննարկվել են 300-ից ավել չափման միջոցի տեսակի հաստատման նպատակով ներկայացված հայտեր և գրանցվել է Պետական գրանցումների մատյանում 185 չափման միջոցի տեսակի հաստատումը: Կատարվել են հինգ կազմակերպությունների չափման միջոցների արտադրության և նորոգման լիցենզավորման ներկայացված հայտերի և փաստաթղթերի փորձաքննություն և ամփոփում, նյութերի ներկայացում լիցենզավորման հանձնաժողով լիցենզիա տրամադրելու համար:

2004 թվականին նախատեսվող աշխատանքները.

1. Համապատասխան նախարարությունների, այլ գերատեսչությունների, «Ստանդարտների և որակի ազգային ինստիտուտ» ՓԲԸ և այլ կազմակերպությունների կողմից տեխնիկական կանոնակարգերի մշակումների կազմակերպում և ներկայացում հաստատման:

2. Ոլորտը կանոնակարգող համապատասխան ստանդարտների մշակման և ուղղակի կիրառումով ընդունման աշխատանքների շարունակական կատարման կազմակերպում, ստանդարտների միասնական տվյալների բազայի ստեղծման կազմակերպում:

3. Հավատարմագրման ոլորտում մասնագիտացված փորձարկման լաբորատորիաների համար անհրաժեշտ սարքավորումների ձեռք բերման կազմակերպում:

4. Շարունակել բանակցությունները Համաշխարհային Բանկի հետ հավատարմագրման և վերահսկողության ոլորտների փորձարարական բազաների վերազինման և մասնագիտացված լաբորատորիաների սարքավորումների համար անհրաժեշտ ֆինանսավորում ստանալու նպատակով:

5. *ԱՊՀ երկրների Միջպետական Խորհրդի ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման Բյուրոյի կողմից նախատեսվող միջոցառումներին մասնակցություն: կազմակերպում:*

2.16. Որակի վերահսկողություն

Կազմակերպվել է «Կաթի եւ կաթնամթերքի որակ» թեմայով խորհրդակցություն, որին մասնակցել են արտադրողներ, սպառողների շահերի պաշտպանության հասարակական կազմակերպությունների եւ ԶԼՄ ներկայացուցիչներ և արդյունքում ընդունվել է համապատասխան որոշում արտադրանքի նորմատիվ փաստաթղթերի պարտադիր պահանջների խախտումների վերացման և կանխարգելման ուղղությամբ:

Տարբեր պատճառներով պետական տեսուչների կողմից գրվել է 137 զեկուցագիր՝ ստուգումները երկարացնելու, ժամանակավորապես հետաձգելու և չեղյալ համարելու մասին:

Ստուգված ձեռնարկություններից 237-ում հայտնաբերվել են տարբեր տեսակի խախտումներ, որից մանրածախ առեւտրի կանոնների՝ 8, չափագիտական նորմերի՝ 16, սերտիֆիկացման կանոնների՝ 51, նորմատիվ փաստաթղթերի՝ 43, ժամկետանց ապրանքների

123 խախտումներ: Ստուգումների արդյունքների հիման վրա Գլխավոր պետական տեսուչի որոշմամբ խախտումներ թույլ տված պատասխանատու անձանց նկատմամբ կիրառվել են վարչական տուգանքներ՝ 12548000 դրամի չափով: Փաստացի պետական բյուջե է մուծվել 4538000 դրամ:

2450000 դրամ տուգանքները բռնագանձելու պահանջի մասին հայցադիմումներ են ներկայացվել դատարան: Աշխատանքներ են տարվում մնացած գումարները՝ 5560000 դրամ գումարի չափով գանձելու համար:

2004 թվականի համար նախապատրաստվել է ծրագիր՝ ուղղված Տեսչության կանոնադրությամբ սահմանված գործառույթների իրականացման համար:

2.17. Տնտեսության մեջ աշխատանքների անվտանգ կազմակերպման հսկողություն

2003թ. ընթացքում տեսչության կողմից կատարվել են 3100 համալիր, նպատակային և օպերատիվ - տեխնիկական ուսումնասիրություններ և ստուգումներ, որոնց արդյունքում բացահայտվել են աշխատանքների անվտանգ կատարման գծով օրենսդրական, իրավական, նորմատիվ, տեխնիկական ակտերի նորմերի, ընդերքի օգտագործման պահանջների խախտումների ու շեղումների 5482 դեպք:

Ուսումնասիրությունների և ստուգումների արդյունքում բացահայտված խախտումներից տեղում վերացվել են 4671-ը, 1 և ավելի հերթափոխից դադարեցվել են աշխատանքները 1236 օբյեկտներում, խախտման դեպքերի համար, որոնք խիստ վտանգավոր չէին, տրվել են կարգադրագրեր և կազմվել է ժամանակացույց դրանց վերացման համար:

Տարվա ընթացքում տեսչության առաջարկությամբ վարչական տարբեր պատասխանատվության են ենթարկվել 80 պաշտոնատար անձ, որից 16-ն ազատվել են աշխատանքից, 10 մարդկանց նկատմամբ ներկայացվել են գործեր իրավապահ մարմնիններին: Հաշվետու ժամանակաշրջանում տեսչությունում անվտանգության տեխնիկայի և աշխատանքի պաշտպանության հարցերով ատեստավորվել են ընկերությունների 53 ղեկավար, ինժեներատեխնիկական աշխատողներ, ընկերություններում ստուգվել են 2264 աշխատողների գիտելիքները:

Հայլեռտեխհսկողության տեսչությունը /այսուհետ՝ տեսչություն/ ակտիվորեն մասնակցել է ԱՊՀ-ի «Արդյունաբերական անվտանգության միջպետական խորհրդի» աշխատանքներին, նշված խորհրդի ծրագրերի և քննարկվող հարցերի նախապատրաստմանը և իրագործմանը, ինչպես նաև «Հանքահորերում աշխատանքերի անվտանգ կատարման մասին» և «Անդրսահմանային արտադրական վթարների

հետևանքերի կատարման մասին» ՄԱԿ-ի միջազգային կոնվենցիաներին Հայաստանի անդամագրման գործընթացներին:

Համաձայն ՀՀ կառավարության 1111 98թ. N702 որոշման շարունակվում են աշխատանքները հանրապետության առավել վտանգավոր հրդեհապայթունավտանգ օբյեկտներում «Արդյունաբերական անվտանգության վկայագրերի» մշակման և փորձաքնության ուղղությամբ:

Նշված միջոցառումների իրականացման, ինչպես նաև հսկողական – պրոֆիլակտիկ աշխատանանքերի արդյունավետ կազմակերպման շնորհիվ հանրապետության տնտեսության մեջ զգալիորեն նվազել են արտադրական վթարները և դժբախտ դեպքերը:

Տարվա ընթացքում տեսչության հսկողության տակ գտնվող օբյեկտների արտադրության հետ կապված մահացու ելքով եղել են 6 դեպքեր, ծանր ելքով 4 դեպք, 1-ին և 2-րդ կարգի արտադրական վթարներ չեն արձանագրվել:

Աշխատանքների անվտանգ կատարման մակարդակի բարձրացման նպատակով տեսչությունը ՀՀ բնապահպանության նախարարության, «ՀայԳունՄետՆախագիծ» ինստիտուտի մասնագետների մասնակցությամբ քննարկել են ստորգետնյա եղանակով մշակվող Սոթքի, Մեղրաձորի և Կապանի լեռնահարստացուցիչ կոմբինատի հանքերում կիրառվող մշակման համակարգեր, նրանց պարամետրերի չափերը, տրվել են համապատասխան տեխնիկական եզրակացություններ:

Տեսչությունը քննարկել և տեխնիկական լուծումներ է առաջարկել «Զանգեզուրի Պ/Մ կոմբինատ» ՓԲԸ-ի «Ագարակի Պ/Մ կոմբինատի», Սոթքի հանքերի եզրային կողերի ձևավորման և հանքաստիճանների պարամետրերի ընտրության ժամանակ լեռնային աշխատանքերը փլուզման անվտանգ գոտու սահմաններից դուրս կատարելու հարցերով:

Ի կատարումն «Արտակարգ իրավիճակների հետևանքերի նվազեցման, բնակչության պաշտպանության 2000-2004թթ. ծրագրի մասին» ՀՀ կառավարության որոշման տեսչությունը, ըստ հաստատված ժամանակացույցի, իրականցրել է հանրապետությունում շահագործվող սառցարանային տնտեսությունների ճնշման տակ աշխատող անոթների գույքագրման, ճնշակային համակարգի փորձարկման և ամոնիակ գազի լաբորատոր վերլուծության աշխատանքեր: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Նաիրիտ-1» ՓԲԸ և «Նաիրիտ-2» ՓԲԸ վերջին տարիներին գտնվում են ոչ կայուն և անորոշ վիճակում, ինչպես նաև ենթարկվել են որոշակի կառուցվածքային փոփոխությունների՝ տեսչության կողմից իրականացվել են օպերատիվ, նպատակային և համալիր ստուգումներ, որոնց արդյունքում արձանագրվել է, որ «Նաիրիտ-1» ՓԲԸ բոլոր արտադրամասերում շահագործվում են բարոյապես և ֆիզիկապես մաշված տեխնոլոգիական սարքավորումներ, տեխնոլոգիական պրոցեսները հագեցված չեն ՀՍՍ-ով, գազանալիզատորներով, ավտոմատիկայի

միջոցներով, արտադրություններն ապահովված չեն մեխանիկական, էլեկտրական և ավտոմատիկայի պահեստամասերով:

2002թ. «Ջրմուղ-Կոյուղի» ՓԲԸ համակարգի քլորակայաններում տեսչության ստուգումների արդյունքում բացահայտված խախտումները վերացնելու նպատակով կառավարության կողմից հատկացվել է 15 մլն. դրամ:

«Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի հետ կատարվում են աշխատանքներ վերգետնյա և ստորգետնյա գազատարերի անվտանգ շահագործման ուղղությամբ, ուժեղացվել է հսկողությունը ստորգետնյա գազատարերի էլեկտաքիմիական կոռոզիայից պաշտպանության աշխատանքների վրա, ռեժիմային հսկողության տակ է վերցված Հրազդանի ՋԷԿ-ի «Հրազդան-5» գերկրիտիկական պարամետրերով կաթսայատան տեղակայանքները:

Չնայած ձեռնարկած մի շարք միջոցառումների և աշխատանքների՝ շարունակվում են անօրինականությունները շինությունների արդյունաբերական ձեռնարկություններում: Հանրապետությունում գործող 232 հանքավայրերից ընդերքօգտագործման լեռնահատկացման ակտ են ձևակերպել միայն 202-ը:

Լեռնահանքային, երկրաբանա-հետախուզական կազմակերպությունների, հիդրոտեխնիկական կառույցների մի շարք ստորգետնյա փորվածքներում երկարատև կանգառների պատճառով ստեղծվել են բարդ և վտանգավոր պայմաններ, հնարավոր է վնասվեն ստորգետնյա կոմունիկացիաները և շարքից դուրս գան ամրակապերը: Լեռնատեխնիկական հսկողության Սյունիքի, Լոռու, Շիրակի մարզային բաժինները տարվա ընթացքում հետամուտ չեն եղել կազմակերպությունների կողմից լեռնային աշխատանքների զարգացման ծրագրերի կազմման գործընթացներին և սահմանված կարգով դրանց համաձայնեցմանը: Թերևս այդ է պատճառը, որ լեռնահանութային կազմակերպությունների ավելի քան 40%-ն աշխատում են չհամաձայնեցված լեռնային աշխատանքների զարգացման ծրագրերով:

Հավելված 1

Համառոտ տվյալներ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության համակարգի 2003թ. ֆինանսատնտեսական գործունեության մասին

1. ՀՀ վարչապետի «2004 թվականի բյուջետային գործընթացը սկսելու մասին» 2002թ. դեկտեմբերի 20-ի N 809-Ն որոշման համաձայն Նախարարությունը ներկայացրել ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության համակարգի Հայաստանի Հանրապետության 2004-2006թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրերը, 2004 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը և պետական տուրքերի, ոչ հարկային եկամուտների և կապիտալի գործառնություններից եկամուտների գծով ՀՀ 2004-2006թթ. պետական բյուջեների նախագծերով ծրագրավորման ենթակա բյուջետային մուտքերի գումարների կանխատեսումները:

2. Կազմվել է համակարգի 2004թ. միջազգային կազմակերպություններին անդամավճարների փաթեթը և ներկայացվել է ՀՀ արտաքին գործերի նախարարություն:

3. Համակարգվել է Նախարարության և առանձնացված ստորաբաժանումների կարիքների համար իրականացվող գնումների գործընթացը:

4. Նախարարության կողմից ամբողջությամբ իրականացվել է ՀՀ 2003թ. պետական բյուջեով նախատեսված հետևյալ ծրագրերի ֆինանսավորումը.

մլն. դրամ

		2003թ.		
N		Նախատեսված	Փաստացի	
1.	Աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների պահպանման ծախսեր	313.9	313.9	ՀՀ 2003թ. պետական բյուջեի կատարումն ապա-հովող միջոցառումների մասին ՀՀ կառավարութ-յան 2003թ. մարտի 6-ի N 184-Ն որոշման համաձայն
2.	Գիտության գծով (բազային ֆինանսավորում), ընդամենը՝ այդ թվում.	164.2	164.2	
	- Երևանի ֆիզիկայի ինստիտուտ	60.0	60.0	
	- Ռադիոֆիզիկայի ինստիտուտ	31.7	31.7	
	- Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոն	12.6	12.6	
	- Գիտատեխնիկական գրադարան	59.9	59.9	
3.	«Ռադիառակտիվ թափոնների վնասազերծում» ՓԲԸ	15.7	15.7	
4.	ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման կենտրոն	250.0	250.0	
5.	Հայաստանում զբոսաշրջության զարգացման կենտրոն	20.0	20.0	
	Ընդամենը	763.8	763.8	
6.	ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին ընդամենը	28.5	28.5	
	այդ թվում՝			
	-2002-2003թթ. 9 ամսվա ընթացքում կա-տարված մարդասիրական օգնության կարգով ՀՀ ներմուծվող ապրանքների համապատասխանության պարտադիր հավաստման աշխատանքների համար	13.8	13.8	ՀՀ կառավարության 2003թ. ապրիլի 10-ի N 297-Ա և ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 18-ի N 1664-Ա որոշումների համաձայն
	-«Ռադիոկտիվ թափոնների վնասազեր-ծում» ՓԲԸ 1999-2002 թթ. գործունեութ-յան արդյունքներով առաջացված հար-կային պարտքը մարելու համար	11.1	11.1	ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 11-ի N 1647-Ա որոշման համա-ձայն
	«ՀՀ զբոսաշրջության զարգացման գործակալություն» ՓԲԸ-ի համար «Պետական տուրքի մասին» օրենքի պետական տուրքը վճարելու նպատակով գումար հատկացնելու	0.6	0.6	ՀՀ կառավարության 2003թ. նոյեմբերի 6-ի N 1402-Ա որոշման համաձայն
	«ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 19-րդ հոդվածին համապատասխան և 2004թ. պետական գնումների գործընթացի նախապատրաստման միջոցառումների իրականացման նպատակով	3.0	3.0	ՀՀ կառավարության 2003թ. սեպտեմբերի 11-ի N 1144-Ա որոշման համաձայն
7.	«Նախորդ տարիների պարտքերի մարում» նպատակով ,պահպանման ծախսերի գծով հատկացվել է	44.7	44.7	ՀՀ կառավարության 2003թ. ապրիլի 23-ի N 406-Ն և մայիսի 2-ի N 475-Ն որոշումների համաձայն
	Ընդամենը	837.0	837.0	

5. Նախարարության միջոցով 2003 թվականի ընթացքում հավաքագրված ոչ հարկային եկամուտները կազմում են.

Հ/Հ	Ոչ հարկային եկամուտի տեսակը	Գումարը /հազ.դրամ/
1.	Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքեր	10220.0
2.	Պետական տուրքից մուտքեր, այդ թվում	29432.0
2.1.	Բնօգտագործման լիցենզիաների և հանքավայրերի օգտագործման համար	26530.0
2.2.	Պայթուցիկ նյութերի առևտրի, պայթեցման աշխատանքների կատարման և ջրային փոխադրամիջոցների գրանցման համար	1728.0
2.3.	Չափման միջոցների արտադրության, նորոգման, փորձարկումներ և սերտիֆիկացում կատարելու վկայագրեր տալու համար	1174.0
3.	Առևտրային ընկերությունների գործունեության արդյունքում հավաքագրված շահութաբաժիններից մուտքեր	16899.0
	Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	56551.0

6. 2003թ. գործունեության արդյունքում Նախարարության համակարգի ընկերությունների կողմից արտադրանքի, աշխատանքների, ծառայությունների իրացման ծավալը կազմել է 37,2 մլրդ. դրամ՝ նախորդ տարվա 24.3 մլրդ. դրամի համեմատ (բերված բոլոր ցուցանիշները համադրելի են): Նման աճը հնարավորություն է տվել ընկերություններին բարելավել իրենց ֆինանսական վիճակը:

2003թ. գործունեության արդյունքում (նախնական տվյալներով) Նախարարության համակարգի ընկերությունների (շահույթով աշխատողների) կողմից ստացված շահույթը կազմել է 8.5 մլրդ. դրամ նախորդ տարվա 6.9 մլրդ. դրամի համեմատ, վնասը (վնասով աշխատողների) կազմել է 1.4 մլրդ. դրամ նախորդ տարվա 1.6 մլրդ. դրամի համեմատ:

2003թ. ընկերությունների կողմից բյուջե է փոխանցվել 0.83 մլրդ. դրամ բոլոր հարկերի գծով, նախորդ տարվա 0.59 մլրդ. դրամի համեմատ: Բյուջեի նկատմամբ պարտավորությունների մնացորդը առ 01.01.2004թ. կազմել է 0.8 մլրդ. դրամ, այդ թվում՝ տույժ տուգանքերը 0.45 մլրդ. դրամ կամ 56.1%:

2003թ. ընթացքում տեղի է ունեցել նախորդ տարիների հարկային ապառքների մի մասի, ինչպես նաև տարվա ընթացքում հաշվարկված հարկային պարտավորությունների մարում:

Օրինակ, ավելացված արժեքի հարկի գծով մնացորդը նվազել է 2.4 մլն. դրամով, շահութահարկի գծով նվազել է 65.1 մլն. դրամով, եկամտահարկի գծով պարտքը նվազել է 2.0 մլն. դրամով և այլն:

01.01.2004թ. դրությամբ բյուջեի նկատմամբ պարտավորությունները, ըստ հարկատեսակների, նախնական հաշվարկներով, կունենան հետևյալ տեսքը՝

մլն. դրամ

Ցուցանիշի անվանումը	01.01.2003թ.	01.01.2004թ.
Ավելացված արժեքի հարկ	69.5	71.9
Շահութահարկ	105.9	40.8
Եկամտահարկ	195.0	193.0
Գույքահարկ	12.6	13.6
Հողի հարկ	16.2	16.8
Տույժեր	441.7	446.4
Տուգանքներ	23.2	4.4
Բնապահպանման վճարումներ	0.2	0.2
Բնօգտագործման վճարումներ	12.2	15.0
Այլ պարտադիր վճարներ	43.9	0.6
Ընդամենը	920.4	802.7

2003թ. սոցիալական ապահովագրության գծով ընկերությունների կողմից տարեկան վճարումը կազմել է 0.49 մլրդ. դրամ, նախորդ տարվա 0.32 մլրդ. դրամի համեմատ:

2003թ. ընթացքում հաշվարկվել և վճարվել է շուրջ 2.1 մլրդ. դրամ աշխատավարձ:

Նախարարության համակարգի ընկերությունները՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 1998թ. նոյեմբերի 28-ի N 740 և 1999թ. դեկտեմբերի 2-ի N 729 որոշումները՝ 1999թ. դեկտեմբերի 21-ի N 239 հրամանով, 2000թ. հունվարի 1-ից սկսած իրենց ֆինանսական հաշվետվությունները կազմում ու ներկայացնում են ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտների, նոր հաշվային պլանի և ֆինանսական հաշվետվությունների լրամշակված ձևերի, ինչպես նաև վերջիններիս չհակասող իրավական ակտերին համապատասխան:

Հավելված 2

Նախարարության փաստաթղթաշրջանառությունը

Հաշվետու ժամանակաշրջանում ստացվել են 339 քաղաքացիների դիմում-բողոքներ, որոնցից 69-ը՝ ՀՀ Նախագահի նախընտրական շտաբից, 116-ը՝ ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ կառավարության, ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմերից, 154-ը՝ անհատական - բոլոր դիմումներին տրվել են համապատասխան ընթացք և սահմանված կարգով պատասխանվել: Դիմումների վերաբերյալ

հաշվետվությունն ամեն եռամսյակ սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարին:

2003թ. ընթացքում հաշվառվել է նախարարի 165 հրաման:

2003 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 30-ը ներառյալ Նախարարության ընդհանուր բաժնում հաշվառման են վերցվել 7393 պաշտոնական գրություններ:

Մտից 7393 գրություններից 65-ը ստացվել են ՀՀ Նախագահի աշխատակազմից, 13-ը՝ ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմից, 12-ը՝ ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմից, 1144-ը՝ ՀՀ կառավարության աշխատակազմից:

Նշված 1144 գրություններից 380-ը ՀՀ կառավարության որոշումներ են, 96-ը՝ ՀՀ վարչապետի որոշումներ, 668-ը՝ ՀՀ կառավարության նիստերի արձանագրությունների քաղվածքներ, հանձնարարականներ, 1825-ը՝ ՀՀ նախարարությունների աշխատակազմերից և այլ գրություններ:

2003 թվականին նախարարությունից առաքվել են թվով 3349 ելից գրություն, որից 1635-ը՝ նախարարի, 807-ը՝ առաջին տեղակալի և 907-ը՝ տեղակալների ստորագրությամբ:

Մտից գրություններից 4940-ը վերցվել են հսկողության, որոնք սահմանված կարգով ընթացք են ստացել և կատարվել:

Հավելված 3

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Միջոցառման անվանումը	Նպատակը	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
1	2	3	4	5
«ՀՀ տարածքային տնտեսական զարգացման ռազմավարության հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	• մարզերի զարգացման ծրագրերի մշակման հենքի ձևավորում, • ՀՀ կառավարության գործունեության ծրագրի 4.2.1 կետի իրագործում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	2004թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	-
«ՀՀ կառավարության 2000 թվականի մայիսի 12-ի «Հայաստանի Հանրապետությունում արտադրանքի և ծառայությունների համապատասխանության պարտադիր հավաստման մասին» թիվ 239 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	• քաղաքացիների կյանքի և առողջության անվտանգության ապահովում, • ՀՀ կառավարության գործունեության ծրագրի 4.2.2 կետի, 14 պարբերության իրագործում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	2004թ. մայիսի 3-րդ տասնօրյակ	-
««Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	արդյունաբերական սեփականության իրավական դաշտի համապատասխանեցում «Արտոնագրային իրավունքի մասին» համաձայնագրի պահանջներին	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	2004թ. Հունիսի 1-ին տասնօրյակ	-
««Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագիծները ՀՀ կառավարություն ներկայացնելը	• մտավոր սեփականության իրավական պաշտպանություն • ՀՀ կառավարության գործունեության ծրագրի 4.2.6 կետի, 4-րդ պարբերության պահանջների իրագործում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	2004թ. Հունիսի 2-րդ տասնօրյակ	-
«Ներքին շուկայի պաշտպանության նպատակով քանակական սահմանափակումների և սակագնային քվոտաների կիրառման դեպքում ներմուծման թույլտվությունների կամ ներմուծման համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Ներքին շուկայի պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 17 հոդված, 3 կետի կիրարկման ապահովում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	2004թ. Հունիսի 3-րդ տասնօրյակ	-
Գործարարությանը և ներդրումներին խոչընդոտող ընթացակարգերի և այլ գործոնների հայտնաբերմանն ուղղված ուսումնասիրության, ներդրումային և գործարար միջավայրի գնահատման վերաբերյալ հաշվետվությունը ՀՀ կառավարություն ներկայացնելը	• գործող օրենսդրության և առկա վարչարարության պայմաններում ներդրումային և գործարար միջավայրի իրական պատկերի վեր հանում, ստացված արդյունքների հիման վրա անհրաժեշտության դեպքում գործողությունների ծրագրի մշակում, • ՀՀ կառավարության գործունեության ծրագրի 4.2.2 կետ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	2004թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	Օտարերկրյա ներդրումների խորհրդա-տվական ծառայության ներգրաված միջոցներ

1	2	3	4	5
«ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում ՀՀ կառավարություն	գույքային հարաբերությունների կարգավորման կատարելագործում,	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	2004թ. Սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	-
«Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2005թ. ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	• ՓՄՁ սուբյեկտների տեխնիկական և ֆինանսական (ներդրումային) աջակցության հնարավորությունների ընդլայնում, դրանց աջակցության համապատասխան ենթակառուցվածքի ստեղծում և ամրապնդում • «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի պահանջ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրու-թյան ազգային կենտրոն» հիմնադրամ,	2004թ. Նոյեմբերի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե
««ՓՄՁ պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում ՀՀ կառավարություն	• ՓՄՁ զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծում, • ՀՀ կառավարության գործունեության ծրագրի 4.2.2. կետի 11-րդ պարբերություն	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	2004թ. Նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	-
«Լեռնային փորվածքների հորատանցքերի լուծարման և գործունեության դադարեցման (կոնսերվացիա) կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Սահմանել լեռնային փորվածքների լուծարման, դրանց կոնսերվացման տեխնիկական դրույթները, նորմատիվա-իրավական պահանջները՝ կապված ընդերքի օգտագործման, շրջակա միջավայրի և լեռնային փորվածքների պահպանման հետ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն ՀՀ բնապահ-պանության նախարարություն	2004թ. Դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	-
«Հավատարմագրման վկայագրերի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	հավատարմագրման ձևերի հաստատում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	«Համապատաս-խանության գնահատման մասին» օրենքի ընդունումից հետո 3-ամսյա ժամկետում	-
«Չափման միջոցների ստուգաչափման, չափագիտական վկայագրման աշխատանքների վճարման սակագների հաշվարկման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին մատուցվող ծառայությունների համար վճարումների սակագների կարգավորում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	«Չափումների միասնականու-թյան ապահովման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո 3-ամսյա ժամկետում	-
«Հայաստանի Հանրապետությունում համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա ապրանքների մաքսային տարածք ներմուծման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Պարտադիր հավաստման ենթակա ապրանքների ներմուծման գործընթացի կանոնակարգում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե	«Համապատաս-խանության գնահատման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո 3-ամսյա ժամկետում	-
«Հայաստանի Հանրապետությունում մեծությունների միավորների միջազգային համակարգի մեծությունների միավորների կիրառման, դրանց անվանումների և պայմանանշանների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն	ՀՀ-ում մեծությունների միավորների միջազգային համակարգի մեծությունների միավորների և արտահամակարգային միավորների կիրառման ապահովում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	«Չափումների միասնականու-թյան ապահովման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո 4-ամսյա ժամկետում	-

ներկայացնելը				
1	2	3	4	5
««Չափագետ» ՓԲԸ «Չափագրության ազգային ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Չափագիտության բնագավառում պետական քաղաքականության իրականացման ապահովում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	«Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո 5-ամսյա ժամկետում	-
«Հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման կարգերը և ընթացակարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	• Հյուրանոցային տնտեսության համակարգի կարգավորում • «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի կիրարկման ապահովում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին » ՀՀ օրենքի ընդունումից հետո 5-ամսյա ժամկետում	-
«Հյուրանոցային ծառայությունների մատուցման կարգը և պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	• Մատուցվող ծառայությունների որակի ապահովում, սպառողների շահերի պաշտպանություն • «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի կիրարկման ապահովում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո 5-ամսյա ժամկետում	-
«Զբոսավարի և ուղեկցորդի գործունեության լիցենզավորման կարգերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	• Մատուցվող ծառայությունների որակի և անվտանգության ապահովում, սպառողների շահերի պաշտպանություն • «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» և ««Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների կիրարկման ապահովում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» և ««Լի-ցենզավորման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների ընդունումից հետո 5-ամսյա ժամկետում	-